

Սոցիալական ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և պրակտիկաների վերլուծություն

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2016

Սույն ծրագիրն իրականացվում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Արմավիրի զարգացման կենտրոնի, Մարտունու կանանց համայնքային խորհրդի և Սեյվ դը չիլդրենի կողմից: Սույն հրատարակության մեջ տեղ գտած կարծիքները պարտադիր չէ, որ համընկնեն Եվրոպական միության կարծիքների հետ:



Կիրառված մեթոդաբանությունը

1. Սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման վրա սոցիալական ոլորտում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական քաղաքականության ազդեցությունը գնահատելու նպատակով՝ կիրառվել են հետևյալ մեթոդները.
 - սոցիալական ոլորտի իրավական ակտերի, պետական քաղաքականությունը սահմանող ռազմավարական փաստաթղթերի ու ազգային ծրագրերի վերլուծություն.
 - աշխատուժում կանանց մասնակցության և կանանց զբաղվածության ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնման միջազգային փորձի ուսումնասիրություն.
 - իրավիճակի և միտումների ամփոփում՝ ոլորտում իրականացված հետազոտությունների զեկույցների և այլ հրապարակումների վերլուծության միջոցով.
 - եզրակացությունների ամփոփում և առաջարկությունների ներկայացում:

1. Պետական քաղաքականության և իրավական կարգավորման հետազոտություն

2. Ուսումնասիրվել են.

- ՀՀ Սահմանադրությունը, այդ թվում՝ փոփոխությունների նախագիծը
- ՀՀ ընտանեկան օրենսգիրքը (ընդունված է՝ 2004թ. նոյեմբերի 9-ին)
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ընդունված է՝ 1998թ. մայիսի 5-ին)
- ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (ընդունված է՝ 2004թ. նոյեմբերի 9-ին)
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 1996թ.)
- «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 2004թ. դեկտեմբերի 9-ին)
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 2013թ. մայիսի 20-ին)
- դեկտեմբերի 22-ին)
- «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 2010թ. դեկտեմբերի 22-ին)
- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 2010թ.)
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 2014թ. դեկտեմբերի 17-ին)
- «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 2013թ. դեկտեմբերի 12-ին)
- «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 27 հոկտեմբերի 1998թ.)
- «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունված է՝ 05.12.2000)
- ՀՀ կառավարության 2014թ. մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 15-ի «2015թ. ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստների չափերը սահմանելու մասին» N 19-Ն որոշումը
- ՀՀ կառավարության որոշումը «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» (2010թ.)
- ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 30-ի «2014թ. ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, մինչև 2014թ. հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերը սահմանելու և մինչև 2014թ. հունվարի 1-ը ծնված

երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին» N 65-Ն որոշումը

- ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 27 արձանագրային որոշումը
- ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 2-ի «Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 31 արձանագրային որոշումը
- Քաղվածք «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011թ. միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20 մայիսի 2011թ. N 19 նիստի արձանագրությունից
- Քաղվածք «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրին, ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և ընդդեմ գենդերային բռնության 2011թ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 17 հունիսի 2011թ. N 23 նիստի արձանագրությունից
- Նոր ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության նախագիծ և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը (նախագիծ)
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 26 ապրիլի 2011թ. N 31-Ա/1 հրամանը «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010թ. մարտի 30-ի N 28-Ա/1 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ արդարադատության նախարարի 2007թ. մայիսի 14-ի N 97-Ն «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» հրաման:

3. Սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության տեսանկյունից **ՀՀ Սահմանադրությունն** ընդհանուր առմամբ համահունչ է ժամանակակից կոնստիտուցիոնալիզմի սկզբունքներին, հիմնականում արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում հասարակական-քաղաքական հարաբերությունների դինամիկան և մարդու իրավունքների տեսանկյունից պարունակում է միջազգային չափորոշիչներին համապատասխան իրավական նորմեր:

«Հոդված 14.1. Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 35. Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

Հոդված 36. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար:

Հոդված 48. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը.»:»:

4. **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը** գենդերային տեսանկյունից առավել զգայուն է՝ առանձին է սահմանված դրույթ կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին, ինչպես նաև առանձին դրույթ սեռի հատկանիշով պայմանավորված խտրականության արգելման վերաբերյալ:

«**Հոդված 28.** Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:»

5. Նախագծում կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը ներառված է որպես սկզբունք՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներում, ինչը հնարավորություն կտա առավել գործուն մեխանիզմների, քաղաքականությունների և ծրագրերի մշակմանը:

«**Հոդված 15.** Ընտանիքի պաշտպանությունը

Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և բազմացման հիմք, գտնվում է պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո:

Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գործարար միջավայրի բարելավումը.

2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.

3) բնակարանային շինարարության խթանումը.

4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.

5) երեխաների անհատականության, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:»

6. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածի «խտրականությունը, կախված սեռից» նորմը կարգավորվում է «**Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին**» ՀՀ օրենքով, որի նպատակն է՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը: Օրենքի խնդիրներն են ապահովել կանանց և տղամարդկանց՝

- իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարությունը, նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը և խտրականության բացառումը.

- հնարավորությունների հավասարությունը.

- արդյունքի հավասարությունը:

7. Օրենքում սահմանվում է **գենդերային խտրականությունը (ուղղակի, անուղղակի)**՝ սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը.
- **ուղղակի գենդերային խտրականություն**՝ սեռային պատկանելությունն ուղղակիորեն մատնանշող խտրականություն.
 - **անուղղակի գենդերային խտրականություն**՝ խտրականություն առանց սեռային պատկանելության ուղղակի մատնանշման:
8. Օրենքում սահմանվում է նաև **սեռական ոտնձգությունը** որպես գենդերային խտրականության դրսևորումների տեսակ՝ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որոնք ուղղված են անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, ստորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին:
9. Օրենքում բացակայում են գենդերային բռնության, մասնավորապես՝ պտղի սեռի խտրական ընտրության արգելքի և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքի վերաբերյալ իրավական նորմեր, սակայն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է գենդերային խտրականության արգելումը և դրա ձևերը.

«Հոդված 6. Գենդերային խտրականության արգելումը

1. Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի և անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է:
2. Գենդերային ուղղակի խտրականության ձևեր են՝
 - 1) **ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը.**»:
10. **ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն**, ըստ էության, համապատասխանում է միջազգային սկզբունքներին, որոնք պահանջում են քաղաքացու, *անկախ սեռից*, քաղաքացիական իրավունքների պաշտպանություն, այդ թվում՝ սեփականության իրավունքի: Այդուհանդերձ իրավական կարգավորումը հաշվի չի առնում հայաստանյան հասարակության մեջ սոցիալական կարգավորման անբարենպաստ պրակտիկան, որը ձևավորվել է գործում է ընտանիքում կնոջ և տղամարդու դերակատարությունների, մասնավորապես՝ սեփականությունը ժառանգելու և տնօրինելու առկա կարծատիպերի հիման վրա:
11. **ՀՀ ընտանեկան օրենսգիրքը** հիմնականում արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում հասարակական հարաբերությունների փոփոխությունը և բովանդակում է միջազգային չափորոշիչներին համապատասխան իրավանորմեր: Այդուհանդերձ, օրենսգրքում բացակայում են գենդերային բռնության, մասնավորապես՝ **պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքի վերաբերյալ իրավական նորմերը:**
12. **ՀՀ աշխատանքային օրենսգիրքը** աշխատանքային հարաբերություններում արգելում է խտրականությունը, որևէ տեսակի հարկադիր աշխատանքը և աշխատակիցների հանդեպ բռնությունն ու սեռական հետապնդումները: Այն երաշխավորում է արդար աշխատանքային պայմանների իրավունք յուրաքանչյուր աշխատողի համար, իսկ աշխատող կանանց, և որոշ դրույթներում նաև՝ աշխատող ծնողների համար, նախատեսում է լրացուցիչ երաշխիքներ՝ հղիության և ծննդաբերության արձակուրդ, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ, ինչպես նաև՝ աշխատատեղի պահպանում
13. Այդուհանդերձ, օրենսդրորեն կարելի է ամրագրել ընտանեկան և ծնողական պարտականություններ կատարող անձանց աշխատանքի ու ծնողական արտականությունների համատեղմանը նպաստող երաշխիքներ, հիմք ընդունելով Վերանայված Եվրոպական Սոցիալական Խարտիայում նշված բոլոր աշխատողների և նրանց խնամառուների սոցիալական պաշտպանվածության իրավունքի սկզբունքը, ինչպես նաև ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքի վերաբերյալ 27-րդ հոդվածը.

«**Հողված 27.** Ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը

Ընտանեկան պարտավորություններով տղամարդկանց և կանանց համար, ինչպես նաև նման աշխատողների և այլ աշխատողների միջև հնարավորության և վերաբերմունքի հավասարության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով՝ Կողմերը պարտավորվում են՝

1. համապատասխան միջոցներ ձեռնարկել՝

ա) հնարավորություն տալու ընտանեկան պարտավորություններով աշխատողներին՝ ընդունվելու աշխատանքի և մնալու աշխատանքում, ինչպես նաև վերադառնալ աշխատանքի ընտանեկան պարտավորությունների կատարման հետևանքով բացակայությունից հետո, ներառյալ միջոցառումները մասնագիտական ուղղվածության և ուսուցման բնագավառում.

բ) հաշվի առնելու իրենց կարիքները աշխատանքի պայմանների և սոցիալական ապահովության շրջանակներում.

գ) մշակել կամ ապահովել պետական կամ մասնավոր ծառայություններ, մասնավորապես՝ ցերեկային ժամերին երեխաների խնամքի ծառայություններ կամ երեխաների խնամքի համար այլ միջոցառումներ.

2. մայրության արձակուրդից հետո ընկած ժամանակաշրջանում երեխայի խնամքի համար ծնողներից մեկին ապահովել արձակուրդ ստանալու հնարավորությամբ. ընդ որում, արձակուրդի տևողությունը և պայմանները պետք է որոշվեն ազգային օրենսդրությամբ, կոլեկտիվ համաձայնագրերով կամ գործնականորեն.

3. ապահովել, որ ընտանեկան պարտավորությունները, որպես այդպիսին, հիմնավորված պատճառ չհանդիսանան աշխատանքի դադարեցման համար:»:

14. «**Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը** կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ չնայած գենդերային հավասարության տեսանկյունից իրավական ակտն ունի չեզոք ազդեցություն, սակայն որոշ հոդվածներ պարունակում են խտրական դրույթներ՝ կապված հերթական (4 և ավելի) երեխայի խնամքի ժամանակահատվածը աշխատանքային ստաժի հաշվարկման սահմանափակման հետ: Համաձայն հոդված 29-ի՝ աշխատանքային ստաժի մեջ հաշվարկվում է ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ **վեց տարուց ոչ ավելին:**

15. Այդ սահմանափակումը, մի կողմից՝ թույլ չի տալիս ստաժի մեջ հաշվարկել 4-րդ, 5-րդ և ավելի երեխաների խնամելու ժամանակահատվածը, մյուս կողմից՝ չի խրախուսում աշխատող կանանց համար 4 և ավել երեխա ունենալը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է վերացնել խտրական դրույթը՝ աշխատանքային ստաժի մեջ հաշվարկելով ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը, առանց տարիներ սահմանափակումների:

16. «**Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը** կարգավորում է ՀՀ-ում պետության կողմից ընտանեկան, սոցիալական, երեխայի ծննդյան միանվագ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ժամանակավոր անաշխատունակության, մայրության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և թաղման նպաստների, ինչպես նաև՝ հրատապ օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

17. Պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է, որի նպատակներից մեկը՝ երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավումն է: Այս տեսանկյունից իրավական ակտում կան խնդրահգարույց դրույթներ, որոնք ունեն կարգավորման, ինչպես նաև լրացուցիչ դրույթներ ներառելու անհրաժեշտություն:

18. Մասնավորապես՝ **օրենքի** 27-րդ և 28-րդ հոդվածներով նախատեսված մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստն անհրաժեշտ է տարածել վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների վրա, ինչպես նաև չաշխատող անձանց վրա: Այս փոփոխությունը հնարավորություն կնձեռի ընտանեկան

ծեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամ կանանց համատեղել աշխատանքն ու երեխայի խնամքը, ինչպես նաև խրախուսել նրանց հերթական երեխա ունենալը:

19. Օրենքի 7-րդ՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը» գլխում անհրաժեշտ է ավելացնել նոր՝ 28.1 հոդված, որը կկարգավորի չաշխատող անձանց մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, ինչպես նաև մինչև երեխայի երկու տարեկանը լրանալու ժամանակահատվածում աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքի նպաստի տրամադրման հնարավորությունները:
20. **«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը** սահմանում է հիմնական սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, սոցիալական աջակցության իրավունքը (այդ թվում՝ **ընտանեկան բռնության ենթարկված անձանց**), սոցիալական աջակցություն ստացող անձանց իրավունքները և պարտականությունները, սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները: Կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում սոցիալական համագործակցության, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ հարաբերությունները: Սա առայժմ միակ իրավական ակտն է, որ սահմանում է «ընտանեկան բռնություն» եզրույթը. *«ընտանեկան բռնությունը ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառումն է կամ տնտեսական միջոցներից զրկումը»:*
21. Միաժամանակ, օրենքում բացակայում են պտղի սեռի խտրական ընտրության արգելքի և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքի վերաբերյալ իրավական նորմեր:
22. **«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը** սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները: Օրենքում բացակայում են պտղի սեռի խտրական ընտրության արգելքի վերաբերյալ իրավական նորմեր, քանի որ երեխայի իրավունքի հետ կապված հարաբերությունները ծագում են երեխայի ծնվելուց հետո:
23. **«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով** կարգավորվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրառումներն ուղղելու, լրացնելու, փոփոխելու, վերականգնելու և չեղյալ հայտարարելու, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կազմելու և պահպանելու կարգի ու ժամկետների և դրանց հետ կապված այլ հարաբերություններ, ինչպես նաև սահմանվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինների իրավասությունները: Օրենքում բացակայում են պտղի սեռի խտրական ընտրության արգելքի վերաբերյալ իրավական նորմեր, քանի որ երեխայի իրավունքի հետ կապված հարաբերությունները (մասնավորապես՝ ծննդի գրանցման) ծագում են երեխայի ծնվելուց հետո:
24. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ արդարադատության նախարարի 2007թ. մայիսի 14-ի N 97-Ն **«Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին»** հրամանի հավելված 3-ի 2-րդ կետի համաձայն՝ «Դիմումն ընդունելիս ՔԿԱԳ մարմնի ղեկավարն ամուսնացողներին ծանոթացնում է ամուսնության գրանցման պայմաններին ու կարգին, նրանց պարզաբանում է իրենց իրավունքներն ու պարտականությունները՝ որպես ապագա ամուսիններ և ծնողներ»:
25. **«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի** նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում սոցիալական վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում, պետական կենսաթոշակից բացի, կենսաթոշակային լրացուցիչ եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված սոցիալական վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով սոցիալական վճար կատարողին ազդելու կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը:
26. **«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը** սահմանում է Հայաստանի Հանրապետության զինծառայողների և նրանց ընտանիքների

անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները: Օրենքում բացակայում են պտղի սեռի խտրական ընտրության արգելքի վերաբերյալ իրավական նորմեր:

27. **«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի** նպատակն է՝ սահմանել փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները: Օրենքում բացակայում են պտղի սեռի խտրական ընտրության արգելքի վերաբերյալ իրավական նորմեր:
28. ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի **«2014 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերը սահմանելու և մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին»** N 65-Ն, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի **«Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին»** թիվ 275-Ն և ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի **«2015 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստների չափերը սահմանելու մասին»** N 19-Ն որոշումների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք ապահովում են «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումը և, համապատասխանաբար, որևէ առաջարկություն պետք է բխի համապատասխան օրենքում փոփոխություն կատարելուց հետո:
29. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի **«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»** պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշման դրույթները մանրամասն ներկայացված են Հավելված 3-ում:
30. ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի **«Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»** N 1693-Ն որոշման նպատակը երիտասարդ մարդու ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորման, երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպական, մասնակցային պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է: Ծրագրի՝ երիտասարդների գենդերային հավասարության և վերարտադրողական առողջության լուսաբանման վերաբերյալ միջոցառումները և դրանց ֆինանսական ապահովումը հնարավորություն են տալիս դրնանցում ինտեգրել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ու դրա հետևանքների վերաբերյալ թեմաներ:
31. Նույնը կարելի է ասել նաև ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 6-ի N37 արձանագրային որոշմամբ հաստատված **«ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման միջաջառումների ծրագրի»** վերաբերյալ:
32. Ուսումնասիրելով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի նիստի **«Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին»** N19 և 2011 թվականի հունիսի 17-ի նիստի **«Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրին, ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին»** N 23 արձանագրային որոշումներով հաստատված ռազմավարական ծրագրերի գործողությունների իրականացման ժամկետներն ավարտվում են մինչև 2016թ.: Համապատասխան առաջակներ անհրաժեշտ է կատարել ոլորտում նոր ռազմավարական ծրագրի մշակման ընթացքում:
33. ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 2-ի **«Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին»** թիվ 31 արձանագրային որոշմամբ հաստատված ռազմավարության գլխավոր նպատակն է միասնական և համակարգված քաղաքականության մշակման արդյունքում


ստեղծել հավասար հնարավորություններ հասարակության բոլոր տարիքի մարդկանց համար և կյանքի արժանապատիվ պայմաններ տարեց մարդկանց համար: Ռազմավարության շահառուներն են 63-ից բարձր տարիքի անձինք:

34. Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 26 ապրիլի 2011 թվականի N 31-Ա/1 «**ՀՀ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի մարտի 30-ի N 28-Ա/1 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին**» հրամանի մոնիթորինգն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.
- հանրապետության բնակչության թվաքանակի աճի կամ նվազման միտումներ.
 - մահացության մակարդակ, բնակչության առողջության, այդ թվում՝ վերարտադրողական առողջության պահպանում.
 - ծնելիության մակարդակ և միտումներ.
 - միգրացիոն գործընթացներ և բնակչության ապաբնակեցում.
 - կրթական համակարգ և կրթական մակարդակ.
 - հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն»:

II. Աշխատուժում կանանց մասնակցության և կանանց զբաղվածության ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնման միջազգային փորձի ուսումնասիրություն¹


35. 1980-ականներին և 1990-ականների սկզբում կանանց աշխատուժի աճը զգալիորեն գերազանցում էր տղամարդկանց աշխատուժի աճին ողջ աշխարհում, բացառությամբ Աֆրիկայի: Զարգացած արդյունաբերական երկրներում աշխատուժում կանանց մասնակցության մեծացումը պայմանավորված էր **ծնելիության անցման ավարտով**: 1980-ին զարգացած արդյունաբերական երկրների մեծամասնությունում ծնելիության մակարդակը չէր ապահովում **պարզ վերարտադրություն կամ մոտ էր դրա սահմանին**:

Պատկեր 1. Ծնելիության միտումներն աշխարհում՝ ծնելիության գումարային գործակիցը 1970-1975թթ.



Աղբյուրը՝ Population Division of the Department of Economic and Social Affairs of the United Nations Secretariat (2013). World Population Prospects: The 2012 Revision. New York: United Nations

Պատկեր 2. Ծնելիության միտումներն աշխարհում՝ ծնելիության գումարային գործակիցը 2005-2010թթ.




Աղբյուրը՝ Population Division of the Department of Economic and Social Affairs of the United Nations Secretariat (2013). World Population Prospects: The 2012 Revision. New York: United Nations

¹ Վերլուծությունը մշակվել է 2015թ. նոյեմբերի 30-ին ՄԶՄԿ կողմից կազմակերպված «Պտղի սեռի խտրական ընտրության պատճառների կանխման պետական քաղաքականության նախաձեռնություններ» խորագրով կլոր սեղանի ընթացքում ներկայացված «Ծնելիության նվազման միտումները մեղմելուն ուղղված քաղաքականության տարրերը» զեկուցման նյութերի հիման վրա: Վ. Ասատրյան: Մարդկային զարգացման միջազգային կենտրոն: 2015թ. Երևան:

36. 2000-ականների սկզբին ծնելությունն աշխարհում արդեն նկատելիորեն **ցածր էր պարզ վերարտադրության մակարդակից:**


Պատկեր 3. Ծնելիության գումարային գործակցի փոփոխությունն աշխարհում, 1965-2015թթ.



Աղբյուր՝ United Nations, Department of Economic and Social Affairs (UNDESA), Population Division (2013). World Fertility Data 2012 (POP/DB/Fert/Rev2012)

37. Աշխատուժում **կանանց մասնակցության աճը** շարունակվեց նաև 1990-ականներին, հասնելով 60-85 տոկոսի:


Պատկեր 4. Աշխատուժում կանանց մասնակցությունն աշխարհում 2000 թվականին



Աղբյուր՝ World Bank Data 2015

38. 80-ականներին աշխատուժում կանանց մասնակցությունն (ԱԿՄ) առավել շատ ավելացել է այն երկրներում, ուր ծնելիության գումարային գործակիցը (ԾԳԳ) համեմատաբար ավելի է կրճատվել:


Պատկեր 5. Աշխատուժում կանանց մասնակցության փոփոխությունը ԵՄ անդամ երկրներում 1990-2000թթ. և 2000-2013թթ.



Աղբյուրը՝ World Bank Data 2015

39. Անցումային մի շարք տնտեսություններում կանանց տնտեսական մասնակցությունը կրճատվում էր:


Պատկեր 6. Աշխատուժում կանանց մասնակցության փոփոխությունը ԱԵԿԱ անդամ երկրներում 1990-2000թթ. և 2000-2013թթ.




Աղբյուրը՝ World Bank Data 2015

40. **Հեռավոր Արևելքի** երկրներում ԱԿՄ-ի և ԾԳԳ-ի միջև ընդգծված որևէ **փոխկապակցություն չկա**:
41. **Լատինական Ամերիկայի և Կարիբյան** ծոցի երկրներում 1980-ից հետո **ԱԿՄ ավելացումն** ուղեկցվել է **ծնելիության մակարդակի անկումով**, ընդ որում՝ 90-ականների համեմատ 80-ականներին երկու փոփոխություններն էլ ընթացել են ավելի մեծ տեմպով:
42. **Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի** երկրներում կանանց մասնակցությունն աշխատուժում շարունակաբար **ամենացածրն** է, մինչդեռ ԾԳԳ-ի փոփոխությունը երկրից երկիր **տարբեր** է եղել: Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում ԱԿՄ-ն **չնչին փոփոխություն** է կրել 1990-ականներին, մինչդեռ ծնելիությունը շարունակել է նշանակալիորեն **նվազել**: **Անդրսահարյան Աֆրիկայում**, ընդհակառակը, աշխատուժում կանանց մասնակցությունը **շատ բարձր** էր, մինչդեռ ծնելիությունն այս երկրներում շարունակաբար **բարձր** է (4-7՝ մինչև 90-ականների վերջը):

Պատկեր 7. Ծնելիության գումարային գործակիցը 1970 և 2012թթ.



Պատկեր 8. Բացարձակ փոփոխությունը 1990-2000թթ. և 2000-2012թթ միջև




Աղբյուրը՝ World Bank Data 2010

43. Պարզ վերարտադրություն ապահովող, սակայն 5-ից ցածր ԾԳԳ ունեցող զարգացող երկրներում **աշխատուժում մասնակցության ընդլայնումը չի ուղեկցվել աշխատանքի որակի** (բարձր եկամուտ ապահովող մասնագիտական աշխատանք) **բարձրացմամբ**:
44. Կանանց զբաղվածությունն ու աշխատանքային պայմանները.
- նրանց սոցիալ-տնտեսական պայմանների իրական **բարելավման չեն հանգեցրել**,
 - երեխաներին խնամելուն համարժեք **այլընտրանք չեն դարձել**,
 - վճարովի ու չվճարվող աշխատանքների էական **անհամադրելիություն չեն առաջացրել**,
45. Կանանց զբաղվածության և ծնելիության փոխհարաբերության վրա ազդում են նաև մի շարք այլ գործոններ, այդ թվում՝ առանձին երկրներում **սոցիալ-մշակութային և մակրոտնտեսական** համատեքստը:
46. Զարգացած արդյունաբերական երկրների փորձը վկայում է. **կանանց զբաղվածությունը կարող է հանգեցնել ծնելիության շարունակական կրճատման**, երբ.
- զբաղվածությունը նպաստում է կանանց **կարգավիճակի բարձրացմանը**. կանայք **վերահսկում են վաստակն ու ռեսուրսները**, իսկ ընտանեկան որոշումներում, այդ թվում՝ վերարտադրողական խնդիրներու վերաբերյալ **որոշումներում ավել մեծ ասելիք ու քաջ ունեն**.

- արտադրողական (պրոդուկտիվ) և վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) դերերի միջև բախումն էականորեն մեծացնում է **երեխաներ ունենալու այլընտրական գինը** (opportunity cost).
 - **մանկախնամ** հաստատությունների, ծառայությունների, աջակցության **հասանելիությունն ու մատչելիությունը սահմանափակ են**, և երեխայի՝ ցանկալի որակով և տևողությամբ խնամքն էականորեն սահմանափակում է կնոջ տնտեսական գործունեությունը.
 - **ընդհատման ազդեցությունը** (երեխաներին խնամելու և մեծացնելու նպատակով աշխատուժից դուրս մնալու արդյունքում) **մեծ ծախսեր** է ենթադրում
 - տնտեսական գործունեությունից կանանց **օգուտներն ու բավարարվածությունը** զգալիորեն ավելի բարձր են, քան ավելի շատ երեխաներ ունենալուց օգուտներն ու բավարարվածությունը.
 - կանանց զբաղվածությունն ու վաստակած եկամուտները մեծացնում են նրանց տնտեսական կամ ֆինանսական **անկախությունը**՝ նվազեցնելով տարեց հասակում ապահովության համար երեխաներ ունենալու կարիքը կամ կախումը տնտեսական վիճակի վատթարացումից.
 - կանանց տնտեսական դերն ու ընտանիքի բարեկեցության մեջ նրանց ներդրումը բերում են **երեխաների սեռի նախընտրության մեղմացման և արժևորում դուստրերին**.
 - աշխատուժում կանանց մասնակցության մեծացումը պայմանավորված է աղջիկների **կրթության մեջ ներդրումների ավելացմամբ**, և առաջին ամուսնության ու առաջին հղիության տարիքը բարձրանում է.
 - կանանց **աշխատանքն ու կարիերան սկսվում են նախքան ամուսնությունը**, և առաջին ամուսնության ու առաջին հղիության տարիքը բարձրանում է.
47. Կանանց աշխատանքի բնույթը, աշխատանքային գործունեությունն ու պայմանները, որոնք կարող են հզորացնել կնոջը, նվազեցնել դերերի անհամատեղելիությունը, բարձրացնել նրանց կարգավիճակն ու դերն ընտանեկան որոշումներում, մեծացնել նրանց տնտեսական կամ ֆինանսական անկախությունը, այլընտրանք դառնալ բացառապես տնային տնտեսուհու կամ մայրության գործառույթների, երեխաներ ունենալուց բացի այլ օգուտներ ու բավարարվածություն պարզել նրանց ներառում են.
- **վարձու աշխատանքը տնից դուրս**, այդ թվում՝ աշխատանքը ընտանեկան ձեռնարկություններից դուրս.
 - արտադրողական և վարձատրվող **աշխատանքը տնտեսության ֆորմալ հատվածում**, ի տարբերություն ոչ ֆորմալ հատվածի.
 - **կանոնավոր, լրիվ դրույքով մշտական և երաշխավորված** աշխատանքը.
 - **կանոնավոր կամ ֆիքսված աշխատաժամերը**.
 - մասնագիտական կամ աշխարհագրական տեղաշարժի հնարավորություններ առաջարկող՝ **շարժունակություն** ենթադրող աշխատանքները.
 - **որակյալ աշխատատեղերը**՝ առաջխաղացման ու զարգացման հստակ հեռանկարով, որոնք նվիրում են պահանջում, ինչպես նաև մայրության ու տնտեսուհու դերերին որպես այլընտրանք այլ հետաքրքրություններ ու ձեռքբերումներ են առաջարկում.
 - աշխատաշուկայում **խտրականության բացակայությունը**, ինչպես նաև այն աշխատաշուկաները, որոնցում սեռի հատկանիշով հստակ տարանջատումը բացակայում է.
 - այն աշխատատեղերը, որոնք կանանց հնարավորություն են տալիս կազմակերպվել և իրենց ներկայացվածությունն ու ձայնը **լսելի** դարձնել աշխատատեղում, համայնքում և հասարակության մեջ.
 - **սոցիալական ապահովություն**, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովություն երաշխավորող աշխատատեղերը.
 - **երեխայի աշխատանքն** օգտագործելու հնարավորություն չընձեռնող աշխատանքները:


Պատկեր 9. Աշխատուժում մասնակցության կին/տղամարդ հարաբերակցությունը և ԾԳԳ-ն աշխարհում, 2013թ.



Աղբյուրը՝ ILO (2013). "Key Indicators on the Labour Market: 8th edition". Geneva: ILO; World Bank data 2015. UN Population Division. World Population Prospects. 2015


Պատկեր 10. Աշխատուժում մասնակցության կին/տղամարդ հարաբերակցությունը և ԾԳԳ-ն ԱԵԿԱ տարածաշրջանում 2013թ.

Ա. ԱԵԿԱ տարածաշրջանի 28 երկիր




Աղբյուրը՝ ILO (2013). "Key Indicators on the Labour Market: 8th edition". Geneva: ILO; World Bank data 2015. UN Population Division. World Population Prospects. 2015

Բ. Արևելյան Եվրոպա և Հարավային Կովկաս




Գ. Կենտրոնական Ասիա և Ադրբեյջան




48. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճն ուղեկցվում է ծնելիության աճով միայն այն պարագայում, երբ տնտեսական աճին զուգընթաց ավելանում է **կանանց մասնակցությունն աշխատուժում**: Միաժամանակ, ծնելիության մակարդակի բարձրացման համար հստակորեն կարևորագույն գործոն է **կանանց զբաղվածությունն ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունը**:

Պատկեր 11. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և ծնելիությունը SՀԶԿ 30 երկրներում 2006թ.




Աղբյուր՝ “Does economic development explain the fertility rebound in OECD countries?” Angela Luci and Olivier Thévenon

Պատկեր 12. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և ծնելիությունը SՀԶԿ 33 երկրներում 2009թ.



Պատկեր 13. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և ծնելիությունը ԱԵԿԱ 19 երկրներում 2009թ.



Աղբյուր՝ The World Bank Data

49. Մամմեն ու Փեքսոնը (2000թ.), հիմնվելով Գոլդինի (1995) աշխատության վրա, բացահայտեցին որ աշխատուժում կանանց մասնակցության և մեկ շնչի հաշվով եկամտի փոխհարաբերությունը 'Մ'-կորի տեսքն ունի:
50. Կանանց ցածր կրթամակարդակը, տղամարդկանց վաստակի եկամտային ազդեցությունը, ինչպես նաև ընտանեկան և աշխատանքային միջավայրերի տարանջատումը նպաստում են մասնակցության ցածր մակարդակին:

51. Աղքատ, գյուղատնտեսական տնտեսություններում կանանց մասնակցությունը բարձր է, քանի որ ընտանեկան պարտականություններն ու գյուղատնտեսական աշխատանքները համեմատաբար ավելի հեշտ է համատեղելը:
52. Կանանց մասնակցությունը ամենացածրն է ուրբանիզացված, միջին-եկամտային երկրներում, ուր գերիշխող է արտադրության հատվածը:
53. Կանանց մասնակցության ցունցանիշը կրկին բարձր է բարձր-եկամտային երկրներում, որոնց հատուկ են ծառայությունների ծավալուն հատվածն ու կանանց բարձր կրթամակարդակը: Վերը նշվածն արտահայտում է ուրբանիզացման դերը աշխատուժում կանանց մասնակցության վրա:²
54. Զարգացած մի շարք երկրների համար նախկինում արված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ծնելիության և աշխատուժի առաջարկի միջև կապը հակադարձ բնույթ ունի: Եթովպիայում ամուսնացած կանանց համար ծնելիության և աշխատուժի առաջարկի միջև մեկ այլ հետզոտություն նպատակ ուներ ճշտելու, թե արդյո՞ք թույլ զարգացած երկրների պարագայում նույնպես առկա է նման հակադարձ հարաբերություն: Հետազոտության արդյունքները վկայում են, որ երեխաների ընդհանուր թիվը որևէ էական ազդեցություն չունի Եթովպիայում ամուսնացած կանանց աշխատուժի առաջարկի վրա:
55. Նման արդյունքը, թերևս, երկու հնարավոր բացատրություն ունի: Նախ, ծնելիությունը եթովպացի կանանց աշխատուժի առաջարկի համար անկարևոր գործոն կարող է լինել Եթովպիայում տնային տնտեսությունների մեծ չափով, որն ընդգրկում է նաև մեծ տարիքի ավագ երեխաներին: Տնային տնտեսության մեծաթիվ անդամները կարող են մեծապես օգնել ընտանիքի մորը՝ նրա վարձու աշխատանքի պարագայում, կատարելով անվճար տնային աշխատանք:
56. Վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ որոշումներում ծնելիության տասներորդական դերը ունի մեկ այլ հնարավոր բացատրություն ևս՝ գործազրկության և թերզբաղվածության խիստ բարձր մակարդակը: Ուստի կինը, որը վարձու աշխատանք է ճարել նախքան հերթական երեխայի ծնունդը դժվար թե թողնի աշխատանքը երեխայի ծնվելուց հետո:³
57. Աշխարհի զարգացած յոթ երկրների փորձը 1960-2004թթ. նույնպես հետաքրքրական է այս առումով: Ընդհանուր առմամբ, հետազոտությունները վկայում են. եթե պատճառահետևանքային կապը ծնելիության գումարային գործակցի (ԾԳԳ) և աշխատուժում կանանց մասնակցության (ԱԿՄ) միջև այնպիսին է, որ առաջինի փոփոխությունը հանգեցնում է երկրորդի կրճատմանը, ապա նման կապը խուսմ է դերերի անհամատեղելիության հիպոթեզի հաստատման օգտին: Եթե պատճառահետևանքային կապը հանգեցնում է ԱԿՄ-ի ազդեցությամբ ԾԳԳ-ի բացասական փոփոխության, ապա այն կրկին նպաստում է անհամատեղելիության հիպոթեզի հիմնավորմանը:
58. Միաժամանակ, այն դեպքերում երբ պատճառահետևանքային կապը ընթանում է ԾԳԳ-ից ԱԿԿ, ընդ որում ԾԳԳ փոփոխությունը դրական է ազդում ԱԿԿ-ի վրա, ապա թերևս սա հաստատում է սոցիալական արձագանքի հիպոթեզը, որը ենթադրում է, թե աշխատող մայրերի հանդեպ սոցիալական վերաբերմունքն աշխատանքային պայմանների առումով կարող է նպաստել աշխատուժ վերադառնալու կանանց որոշմանը:⁴
59. 2003թ. հունվարին Իսպանիայի կառավարությունը հաստատեց ընտանիքի նոր քաղաքականությունը, որն ուղղված էր մայրության և աշխատուժում կանանց մասնակցության համեմատելիության մեծացմանը: Քաղաքականության շրջանակներում մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատող մայրերին տրամադրվում էր ամենամսյա դրամական նպաստ՝ մեկ երեխայի հաշվով շուրջ 100 եվրո:
60. Քաղաքականության իրականացումից կարճ ժամանակ անց աշխատուժում մինչև երեք տարեկան երեխա խնամող մայրերի մասնակցության աճը կազմեց 1.714 տոկոսային կետով ավելի, քան այն կանանց պարագայում ում համար նման նպաստի իրավունք սահմանված չէր: Աշխատուժում կանանց մասնակցության աճը նպաստառու կանանց խմբում կազմել է շուրջ 5.244%՝ նախքան քաղաքականության իրականացման ժամանակահատվածի համեմատ: Հատկանշական է, որ քաղաքականության

² Տե՛ս՝ David E. Bloom, David Canning etc. (2007), Fertility, Female Labor Force Participation, and the Demographic Dividend:

³ Տե՛ս՝ Blen Solomon, Jean Kimmel (2009) Testing the Inverseness of Fertility and Labour Supply: The Case of Ethiopia:

⁴ Տե՛ս՝ Vinod Mishra, Ingrid Nielsen and Russell Smyt (2009) The Relationship Between Female Labour Force Participation and Fertility in G7 Countries: Evidence from Panel Cointegration and Granger Causality:

ազդեցությունը էականորեն տարբերվում է տարբեր կրթամակարդակ ունեցող կանանց խմբերում, ընդ որում, քաղաքականությունն առավել ազդեցիկ է տարրական կամ հանրակրթական կրթամակարդակ ունեցող կանանց պարագայում, մինչդեռ մասնագիտական կրթություն ունեցող կանանց համար ազդեցությունն ավելի նվազ էր:

61. Այլ ուսումնասիրություններ հետազոտել են նման քաղաքականության ազդեցությունը այլ երկրներում՝ Շոնը (2004) և Նաքը (2004)՝ Նորվեգիայի, իսկ Ֆրանչեսկոնին և Վան դեր Կլաունը (2004)՝ Մեծ Բրիտանիայի համար:⁵
62. ԱՄՆ Երեխայի առողջության և մարդկային զարգացման ազգային ինստիտուտի Երեխայի վաղ խնամքի հետազոտությունը վկայում է, որ երեխայի կյանքի առաջին 12 ամսում մոր լրիվ դրույքով զբաղվածությունը (սակայն ոչ ոչ լրիվ դրույքով զբաղվածությունը) ուղեկցվում է 3, 4.5 տարեկանում և առաջին դասարանում երեխայի ճանաչողական զարգացման որոշ, սակայն ոչ բոլոր, ցուցանիշների զգալիորեն ցածր մակարդակով՝ ոչ իսպանախոս (ոչ լատինաամերիկյան ծագումով) սպիտակ երեխաների պարագայում, մինչդեռ աֆրոամերիկյան ծագումով երեխաների փոքր խմբի պարագայում որևէ էական օրինաչափություն այս առումով չկա:
63. Առաջին տարում լրիվ դրույքով (ԼԴ) զբաղվածության համեմատ ոչ լրիվ դրույքով (ՈԼԴ) զբաղվածության ցուցանիշներն ավելի բարվոք են: Երեխայի կյանքի երկրորդ և երրորդ տարում զբաղվածությունը ճանաչողական զարգացման արդյունքների վրա որևէ փոխկապակցություն չունեն:
64. Լրիվ դրույքով զբաղված մայրերը ավելի բարձր եկամուտ ունեն կյանքի առաջին տարում, իսկ ՈԼԴ կամ ԼԴ աշխատանք ունեցող մայրերը ավելի հաճախ են իրենց երեխաներին մինչև 3 և 4.5 տարեկան հասակը տեղավորել բարձր որակի մանկախնամ ծառայություններ առաջարկող հաստատություններում, ուստի նրանց երեխաները մանկախնամ կենտրոններում ավելի շատ ժամանակ են անցկացրել մինչև 4.5 տարեկանը, քան այն ընտանիքների երեխաները, որոնց մայրերը երեխայի կյանքի առաջին տարում չեն աշխատել ընդհանրապես:
65. Երեխայի կյանքի առաջին տարում մոր աշխատանքի ընդհանուր ազդեցությունը երեխայի ճանաչողական զարգացման վրա, ընդհանուր առմամբ, չեզոք է. առաջին տարում լրիվ դրույքով աշխատանքի էականորեն բացասական ազդեցությունը հատուցվում է մանկախնամ հաստատություններում զգալի անուղղակի դրական ներգործությամբ և մինչև 4.5 տարեկանը երեխայի հանդեպ մայրերի մեծ զգայնությամբ:⁶
66. Բրիտանիայում այս ոլորտում քաղաքականության ուսումնասիրությունները վկայում են, որ ամենադժվար կացության մեջ հայտնվում են մասնագիտական ցածր որակավորում ունեցող կանայք, ովքեր ավելի հաճախ գերադասում են դուրս գալ աշխատանքից երեխային խնամելու ընթացքում, և ապա վերադառնալ ամենացածր վարձատրվող ոչ լրիվ դրույքով աշխատանքի:
67. Մայրերը, ում երեխայի խնամքի հարցում օգնում է ընտանիքը, նշում են, թե չէին կարողանալու աշխատել առանց ընտանիքի նշանակալի աջակցության:
68. Երեխաների՝ բարձրորակ, հանրային ֆինանսավորմամբ ապահովված խնամքը հատկապես կնպաստեր ցածր վաստակ ունեցող մայրերին, ում համար երեխաների խնամքի որակը, տևականությունն ու մատչելիությունը խնդրահարույց են:
69. Ավելի կարճատև աշխատանքային շաբաթը նույնպես կարող էր նպաստել փոքրահասակ երեխաներ ունեցող մայրերի զբաղվածության հարցում այլընտրանքներին, երկու ծնողների համար աշխատանք-ընտանիք հավասարակշռությունը բարելավելու շնորհիվ:
70. Թեպետ, քաղաքականության մոտեցումները, ընդհանուր առմամբ, տղամարդուն, որպես ընտանիքի հացը վաստակողի ենթադրությունից աստիճանաբար տեղափոխվում են դեպի ընտանիքում երկու վաստակողների պատկերացումը, գործնականում աշխատաշուկային կանանց կապակցվածության խիստ սահմանափակումների արդյունքում ողջ կյանքի ընթացքում կանանց վաստակի հանրագումարը տղամարդկանց ընդհանուր վաստակի կեսն է միայն:

⁵ St' u' Sánchez-Mangas R., Sánchez-Marcos V. (2007), Balancing family and work: the effect of cash benefits for working mothers:

⁶ St' u' Brooks-Gunn, Jeanne; Han etc. (2010) First-year maternal employment and childdevelopment in the first 7 years:

71. Աշխատողների եկամտահարկերի մասնակի փոխհատուցման միջոցով երեխայի խնամքի վերաֆինանսավորումը միջին կազմել է շաբաթական շուրջ £50 և հասել է բրիտանական ընտանիքների շուրջ 30%-ին: Հիմնական խմբերը, ում համար հասանելի չի եղել նման աջակցությունը ներառում են ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները և աշխատաշուկայի լուսանցքում հայտնված ծնողներին (Stanley et al., 2006):⁷
72. Շվեդիայում գրեթե բոլոր երեխաները հանրային խնամքի իրավունք ունեն, և 2003թ. երկու, երեք և չորս տարեկան երեխաների 87-96%-ը հաճախել է երեխաների խնամքի հանրային հաստատություններ:
73. Շվեդիայում նախակրթական համակարգը 100%-ով, իսկ ավելի փոքր տարիքի երեխաների խնամքը՝ 75%-ով ֆինանսավորվում է հանրային միջոցներից:
74. Դանիան ընտանիքներին երեխայի խնամքի ընտրության ազատություն է տալիս՝ 24-շաբաթական հասակից մինչև տարրական դպրոց ընդունվելու տարիքը երեխայի խնամքի դրամաշնորհ տրամադրելու շնորհիվ:
75. Մինչդեռ, Մեծ Բրիտանիայում երեխայի կարճատև խնամքի համակարգը (2.5 ժամ՝ օրը նախադպրոցական տարիքի երեխաների համար) աներկբայորեն զիջում է եվրոպական մյուս երկրներում խնամքի տարբերակներին: Եվրոպական այն երկրներում անգամ, ուր նախադպրոցական խնամքն ու կրթությունը լրիվ օրվա տևողությամբ չէ, հաստատության աշխատանքային ժամերն ավելի երկար են: Այսպես, Դանիայում նախադպրոցական հաստատություններում կրթության տևողությունը օրական 3-6 ժամ է, սակայն հաստատությունները բաց են առավոտյան 07:00-ից մինչև 17:00-ն կամ 18:00՝ երկարօրյա տարբերակով: Շվեդիայում ՆԴՀ-ները գործում են առավոտյան վեցից մինչև երոկայն 18:30-ը, մինչդեռ Ֆրանսիայում նախադպրոցական օրվա տևողությունը 08:30-ից 16:30-ն է:
76. Միաժամանակ, Դանիան և Շվեդիան հայտնի են երեխայի՝ հատկապես փոքրահասակ երեխաների խնամքի արտակարգ որակյալ ծառայություններով, ընդ որում մանկախնամ և նախադպրոցական հաստատության անձնակազմը պարտավոր է ունենալ 3.5 տարի տևողությամբ միջնակարգ մասնագիտական կրթություն Դանիայում և բարձրագույն կրթություն՝ Շվեդիայում:
77. Աշխատաժամանակի առումով, Ֆրանսիայի քաղաքականությունը, թերևս ամենաառաջավորն է Եվրոպայում: Երկու «Օբրի օրենքները» աշխատաժամանակը կրճատեցին մինչև շաբաթական 35 ժամը մեծ ընկերությունների համար 2000 թվականից և փոքր կազմակերպություններում՝ 2002 թվականից: Աշխատաժամերի կրճատումը գերազանցապես հիմնավորվում էր գործազրկության բարձր մակարդակի պայմաններում աշխատատեղերը տնային տնտեսությունների միջև բաշխելու տրամաբանությամբ: Միաժամանակ, այս քաղաքականության գերակա ուղղություն էր նաև (հատկապես՝ երկրորդ օրենքի պարագայում), կանանց և տղամարդկանց միջև հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման ձգտումը: Օրենքը հնարավորություն էր տալու հնարավորինս խուսափել կանանց՝ ոչ լրիվ դրույքով զբաղվածության տարածված պրակտիկայից, միտված էր կանանց և տղամարդկանց փաստացի աշխատաժամանակը հավասարեցնելուն, ինչպես նաև, անուղղակիորեն՝ կանանց ու տղամարդկանց միջև տնային տնտեսության ներսում աշխատանքի բեռն ու աշխատանք-ընտանիք հավասարակշռությունն հավասարաչափ բաշխելուն:
78. 2008թ. քաղաքական իշխանության փոփոխության արդյունքում Հանրապետության՝ քաղաքական առավել աջ հայացքների տեր Նախագահը խոստացավ երկիրը վերադարձնել աշխատաժամանակի բարեփոխումներին նախորդող իրողություններին, օրենսդրորեն թույլատրելով ավելի երկար՝ ԵՄ առավալագույն աշխատաժամանակի սահմանումը: Արդյունքում, գործատուներն ու աշխատավորներն այժմ կարող են բանակցել մինչև 48-ժամյա աշխատանքային շաբաթվա շուրջ, սակայն 35 ժամը գերազանցող աշխատաժամանակի յուրաքանչյուր ժամը դիտվում է որպես արտաժամյա աշխատանք: Ֆրանսիական արհմիությունները, հատկապես խոշոր ընկերություններում, հնարավորություն ունեն պաշտպանել գործող համաձայնությունները (Դեյվիս, 2008):

⁷ Տե՛ս՝ Tracey Warren, Elizabeth Fox and Gillian Pascall (2009) Innovative Social Policies: Implications for Work-life Balance among Low-waged Women in England:

79. Նախորդ հետազոտությունները պնդում են, թե 35-ժամյա աշխատանքային շաբաթը նպաստում է աշխատանք-կյանք ավելի բարվոք հավասարաժկշռության հաստատմանը (Ֆանյանի և Լետաբլիեր, 2006, էջ. 86):⁸
80. Երկրների մեծ մասում երեխա խնամող ընտանիքներն պետությունն ուղղակիորեն դրամական փոխանցումներ է կատարում, այդ թվում՝ երեխայի խնամիչ նպաստի կամ մանկախնամ հաստատությունների սուբսիդավորման միջոցով, ինչպես նաև երեխայի ծննդյան և խնամքի արձակուրդի տարբեր սխեմաներ է կիրառում:
81. Ընդհանուր առմամբ, կանանց զբաղվածության կամ ծնելիության խթանմանը միտված քաղաքականության ազդեցության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները մեծապես հակասական են:
82. Տնտային տնտեսություններին ուղղված աշխատողներին հատկացվող փոխհատուցումները, այդ թվում՝ Վաստակի եկամտային հարկի փոխհատուցումը (EITC)¹ ԱՄՆ-ում, Աշխատողների հարկային փոխհատուցումը (WTC)² Մեծ Բրիտանիայում կամ Ընտանիքում հարկերի տարանջատումը Ֆրանսիայում հաստատապես զգալի դրական ազդեցություն են ունենում միայնակ մայրերի մասնակցության վրա: Այդուհանդերձ, դրանք միաժամանակ կրճատում են երկրորդային վաստակողների աշխատուժի առաջարկը (Բլանկ, 2002; Բլանդել, 2000; Հոց և Շոլց, 2003):
83. Բրուերն ու այլք (2008) փաստեր են բերում՝ վկայելով ծնելիության վրա Միացյալ թագավորությունում աշխատողներին տրամադրվող փոխհատուցման զգալի ազդեցությունը:
84. Բաումանն ու Դիքերտ-Կոնլին (2003) ցույց են տալիս, որ EITC-ն որոշակի ազդեցություն ունի ծնելիության վրա ԱՄՆ-ում:
85. Լալիվն ու Ցվայմյուլլերը (2005) բացահայտել են, որ երեխայի խնամքի արձակուրդի տևողությունը զգալի դրական ազդեցություն ունի ծնելիության և բացասական՝ զբաղվածության վրա:
86. Երեխայի ծննդյան համընդհանուր նպաստը, որի տրամադրումը պայմանավորված չէ ծնողի զբաղվածության կարգավիճակով, թերևս, դրական ազդեցություն է գործում ծնելիության վրա (օրինակ՝ Միլլիգան (2005)), մինչդեռ ընտանիքում ծնված երեխաների թվաքանակի վրա մանկախնամ հաստատությունների պետական սուբսիդավորման պատճառային ազդեցությունն այդքան էլ հստակ չէ:
87. Հանկն ու այլք (2004) ցույց են տվել, որ Գերմանիայում երեխայի խնամքի ամբողջական ծավալով սուբսիդավորման մատչելիությունը դրական ազդեցություն է գործում ծնելիության վրա:
88. Բլաուն և Ռոբինսոնը (1989) հիմնավորում են երեխայի խնամքի ծախսերը բացասաբար են ներգործում ծնելիության որոշումների վրա ԱՄՆ-ում:
89. Ամատն ու Գոնսալեսը (2009) նշում են, որ աշխատող մայրերին հարկային փոխհատուցման տրամադրումը՝ զուգակցված տնային տնտեսությանը յուրաքանչյուր երեխայի համար հարկերի նվազեցումները դրական ազդեցություն են ունեցել թե՛ կանանց զբաղվածության, թե՛ ծնելիության վրա:
90. Հիմնավորվում է նաև ընտանիքի եկամտի զգալի դրական ազդեցությունը զբաղվածության և ծնելիության վրա:
91. Միջազգային փորձի և ժամանակակից հետազոտությունների առումով կարևորագույն հարցերից մեկը հետևյալն է. արդյո՞ք երեխայի խնամքի սուբսիդավորման համակարգի բարեփոխումներն ի զորու են միաժամանակ արձագանքել երկու մարտահրավերներին էլ՝ թե՛ զբաղվածության, և թե՛ ծնելիության մակարդակի բարձրացմանը (ինչպես, օրինակ՝ Գերմանիայում):
92. Քանի որ երեխայի խնամքի սուբսիդավորումից օգտվում են բացառապես աշխատող կանայք, ապա նման բարեփոխումը կարող է ուղղվել երկու հիմնախնդիրներին՝ ծնելիության և կանանց զբաղվածության ցածր մակարդակին միաժամանակ:

⁸ Նույն տեղում:

93. Աշխատող մայրերին թիրախավորող երեխայի խնամքի սուբսիդավորումը զբաղվածության վրա նշանակալի ազդեցություն է ունենում, մինչդեռ ծնելիության վրա դրական զգալի ազդեցության ապացույցներն նույնքան ակնհայտ չեն:
94. Այդուհանդերձ, առնվազն երկու ենթախմբի համար, այդ թվում՝ բարձր կրթամակարդակ ունեցող կանանց և այլ երեխաներ չունեցող կանանց պարագայում երեխայի խնամքի սուբսիդավորումը կարող է նպաստել ծնելության մակարդակի բարձրացմանն առնվազն նույնքան, որքան երեխայի ծննդյան համընդհանուր նպաստը:
95. Զբաղվածության և ծնելիության մակարդակի վրա զբաղվածությամբ պայմանավորված ֆինանսական խթանիչների ազդեցության շուրջ հետազոտություններն ու միջազգային փորձը նույնպես միանշանակ լուծումներ չեն առաջարկում և մեծապես կախված են երկրի համատեքստից:
96. Շատ դեպքերում ծնելիությունը բավականին դժվար ու դանդաղ է արձագանքում աշխատող կանանց տրամադրվող ֆինանսական աջակցության նախաձեռնություններին: Սակայն ասվածը մեծապես պայմանավորված է երկրում սոցիալ-տնտեսական գործոններով:
97. Այսպես, ծնելիության մակարդակի էական նվազումը շուրջ 0.5%-ով, ըստ երևույթին, նշանակում է, որ փոխարինման ազդեցությունը եկամտի ազդեցության հանդեպ գերակա է, այն առումով, որ երեխա ունենալու այլընտրանքի ծախսերն ավելանում են:
98. Գրեթե նույնքան հակասական է նաև կանանց զբաղվածության և ծնելիության վրա՝ երեխայով պայմանավորված ֆինանսական խթանիչների ազդեցությունը:
99. Ընդհանուր առմամբ, երեխայի խնամքի համար տրամադրվող նպաստների մեծացումը փոքր, բայց նկատելիորեն բացասական ազդեցություն ունեն զբաղվածության վրա: Նման փոխանցումները պայմանավորված չեն կնոջ աշխատանքով և լրացուցիչ եկամտի դրական ազդեցությունը նվազեցնում է զբաղվածության՝ չաշխատելու համեմատ խթանիչները: Միաժամանակ, նման քաղաքականությունը զգալիորեն դրական ազդեցություն՝ շուրջ 4.6%, ունի ծնելիության վրա:
100. Այդուհանդերձ, վերը նշված ազդեցությունները մեծապես պայմանավորված են աշխատաշուկայի առանձնահատկություններով, որակյալ աշխատատեղերի առկայությամբ և կանանց կրթամակարդակով, աղքատության պատկերով և այլ գործոններով, որոնց ազդեցությամբ այս կամ այն ֆինանսական խթանիչի ազդեցությունը կարող է էականորեն տարբերվել:
101. Երեխայի խնամքի բարեփոխումները կարող են կրկնակի դրական ազդեցություն գործել առնվազն երկու կարևոր ենթախմբի համար: Նախ, առաջին անգամ մայրանալու հավանականությունը մեծանում է՝ առանց զբաղվածության վրա բացասական ազդեցություն թողնելու: Եվ երկրորդ, բարձր կրթամակարդակ ունեցող կանանց թե՛ զբաղվածության, թե՛ ծնելիության վրա դրական ազդեցություն է ունենում երեխայի խնամքի սուբսիդավորման ընդլայնումը:
102. Ի վերջ, երկու բարեփոխումները գրեթե նույն կարգի ֆինանսական ծախսեր են ենթադրում՝ նախքան վարքագծում ցանկալի փոփոխությունների հասնելը: Միաժամանակ, զբաղվածության և ծնելիության վերաբերյալ որոշումների փոփոխությունները երեխայի խնամքի բարեփոխումները կարող են նվազ ծախսատար դարձնել, քանի որ ավելի մեծ թվով կանայք կաշխատեն, մինչդեռ երեխայի նպաստները կարող են դառնալ համեմատաբար ավելի ծախսատար՝ աշխատուժից կանանց դուրս գալու և աշխատաժամերի կրճատման արդյունքում:⁹


⁹ Տե՛ս՝ Peter Haan Katharina Wrolich (2009) Can Child Care Policy Encourage Employment and Fertility? Evidence from a Structural Model:

III. Իրավիճակի վերլուծություն


103. Ծնելիության մակարդակն ու միտումները Հայաստանում, ընդհանուր առմամբ, հետևյալն են:

104. Մի կողմից, համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների, Հայաստանում 15-49 տարեկան կանանց գրեթե 38%-ը երեխա չունի: Եթե համեմատենք 1970 և 2006թթ. ծնելիության տարիքային գործակիցները, ապա կնկատենք, որ կանանց վերարտադրողական տարիքը նեղացել է և՛ վերից, և՛ վարից:

Պատկեր 14. Պատկեր. Ծնելիության տարիքային գործակիցները 1970թ.




Պատկեր 15. Ծնելիության տարիքային գործակիցները, 2006թ.



Աղբյուրը՝ V. Asatryan, R. Yeganyan, K. Koyumjian, I. Sargsyan, M. Allahverdyan. “Below Replacement Fertility: New Trends in Reproductive and Sexual Health in EECA Region” for prepared for Expert Group meeting to review and discuss countries population policy responses to advance ICPD agenda in EECA region “7 billion: Balance, Rights and Equity”. Yerevan. October 2011:

105. Այսպես, եթե 1970թ. ծնելիության տարիքային գործակիցները գրեթե համամասնորեն էին բաշխված բոլոր հիմնական տարիքային խմբերում՝ 20-24, 25-29, 30-34, 35-40, նույնիսկ 40 տարեկանից բարձր կանայք իրենց լուծան ունեին ծնելիության մեջ, ապա 2006թ. հիմնական ծանրաբեռնվածությունն արդեն ընկնում է 20-30 տարեկանների վրա: Սակայն, հաշվի առնելով, որ բարձրացել է նաև կանանց ամուսնության միջին տարիքը, հասնելով 26 տարեկանի, համապատասխանաբար՝ բարձրացել է նաև երեխա ունենալու տարիքը:


Պատկեր 16. Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ, 1970 և 2006թթ.



Աղբյուրը՝ V. Asatryan, R. Yeganyan, K. Koyumjian, I. Sargsyan, M. Allahverdyan. “Below Replacement Fertility: New Trends in Reproductive and Sexual Health in EECA Region” for prepared for Expert Group meeting to review and discuss countries population policy responses to advance ICPD agenda in EECA region “7 billion: Balance, Rights and Equity”. Yerevan. October 2011:


106. Արդյունքում, միջինում ծնելիության տարիքային գործակիցը նեղացել է՝ սահմանափակվելով 24-29 տարիքային խմբով: Դա է պատճառներից մեկը, որ 3-րդ երեխան ունենում են մեծամասամբ 30-39 տարեկան կանայք (տե՛ս Հավելված 3): Նշանակում է, որ ընդլայնված վերարտադրություն երկրում ապահովում են 30-39 տարեկան կանայք: Եվ այս հանգամանքը հարկավոր է հաշվի առնել ժողովրդագրական քաղաքականություններ մշակելիս:

Պատկեր 17. Ամուսնական և մայրական տարիքը Հայաստանում, 1990-2014թթ.



Աղբյուրը՝ Հայաստանի կանայք և տղամարդիկ, ԱՎԾ, 2015թ.:

Պատկեր 18. Առաջին ամուսնություն միջին տարիքը Հայաստանում, 1990-2014թթ.



Աղբյուրը՝ Հայաստանի կանայք և տղամարդիկ, ԱՎԾ, 2015թ.:

Աղյուսակ 1. Երեխաների թիվը՝ ըստ ծնունդների հաջորդականության

Բոլոր կանայք

SURHՔԸ	0	1	2	3	4	5	6+	ԸՆԴԱՄԵՆԸ	Ծնված երեխաների միջին թիվը	Կենդանի մնացած երեխաների թիվը
15-19	96,5	3,4	-	-	-	-	-	100	0,04	0,04
20-24	67,4	20,8	10,6	1,2	-	-	-	100	0,46	0,45
25-29	35,6	18,4	39,5	5,7	0,4	0,2	0,1	100	1,18	1,16
30-34	20,1	13,2	48,2	15,7	2,1	0,5	0,1	100	1,69	1,65
35-39	12,0	10,8	43,4	25,8	6,5	1,2	0,3	100	2,1	2,01
40-44	8,7	10,1	44,4	26,6	8,2	1,2	0,8	100	2,22	2,13
45-49	6,1	7,9	40,6	30,2	11,2	2,9	1,1	100	2,47	2,33
ԸՆԴԱՄԵՆԸ	37,6	12,5	31,1	13,9	3,7	0,8	0,3	100	1,38	1,33

Ամուսնացած կանայք

SURHՔԸ	0	1	2	3	4	5	6+	ԸՆԴԱՄԵՆԸ	Ծնված երեխաների միջին թիվը	Կենդանի մնացած երեխաների թիվը
15-19	57,7	41,4	-	-	-	-	-	100	0,45	0,45
20-24	26,7	46,2	24,3	2,8	-	-	-	100	1,03	1,01
25-29	8,3	24,4	57,7	8,5	0,7	0,3	0,2	100	1,71	1,68
30-34	3,5	13,4	60,1	19,5	2,7	0,7	0,1	100	2,07	2,03
35-39	2,6	9,5	48,6	30,4	7,3	1,3	0,4	100	2,36	2,26
40-44	1,9	7,2	48,6	30,5	9,7	1,4	0,6	100	2,46	2,35
45-49	0,8	6,6	43,0	34,2	11,2	3,0	1,2	100	2,64	2,51
ԸՆԴԱՄԵՆԸ	7,3	17,1	47,3	21,3	5,4	1,2	0,4	100	2,06	1,99

Աղբյուրը՝ DHS, 2010

Աղյուսակ 2. Ծնվածներն ըստ սեռի և ծննդի հերթականության, 2010-2014թթ.

	2010		2011		2012		2013		2014	
	Ա	Տ	Ա	Տ	Ա	Տ	Ա	Տ	Ա	Տ
Ընդամենը ծնվածներ	20 856	23 969	20 213	23 127	19 737	22 743	19 638	22 152	20 162	22 869
1-ին	10 664	11 290	10 334	11 010	9 869	10 584	9 458	10 008	9 443	10 105
2-րդ	7 556	8 325	7 324	8 053	7 336	8 145	7 506	8 145	7 699	8 352
3-րդ	2 115	3 568	2 078	3 291	2 058	3 294	2 189	3 288	2 512	3 659
4-րդ	351	578	335	564	345	529	331	521	361	568
5+	170	208	142	209	129	191	154	190	147	185
%										
Ընդամենը ծնվածներ	100	100	100	100	100	100	100	100	100	100
1-ին	51,2	47,1	51,1	47,6	50,0	46,6	48,2	45,2	46,8	44,2
2-րդ	36,2	34,7	36,2	34,8	37,2	35,8	38,2	36,8	38,2	36,5
3-րդ	10,1	14,9	10,3	14,2	10,4	14,5	11,1	14,8	12,5	16,0
4-րդ	1,7	2,4	1,7	2,4	1,7	2,3	1,7	2,3	1,8	2,5
5+	0,8	0,9	0,7	1,0	0,7	0,8	0,8	0,9	0,7	0,8

Աղբյուրը՝ Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱԿԾ

107. 2013թ. Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից անցկացված «ՀՀ-ում չգրանցված ամուսնությունների հիմնախնդրի ուսումնասիրություն» հետազոտության տվյալների համաձայն, 3 երեխա ունեն 20-29 տարեկան կանանց 8%-ը, իսկ 30-39 տարեկան կանանց՝ 33%-ը: Ունեն 2 երեխա և պատրաստվում են/կուզենային ունենալ 3 ռդ-ին 25-29 տարեկան կանանց 50%-ը, 30-34 տարեկան կանանց՝ 64%-ը, 35-39 տարեկան կանանց՝ 50%-ը (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ունեն 2 երեխա և պատրաստվում են/կուզենային ունենալ 3 ռդ-ին (կանայք)

Տարիք	Տոկոս	Քանակ
25-29	50%	231 կին
30-34	64%	252 կին
35-39	50%	54 կին

Աղյուսակ 4. Պլանավորել են ունենալ հերթական երեխան, սակայն հետաձգում են ծնունդը, որովհետև.

Տարիք	Ֆինանսապես բավարար ապահովված չեն	Պատրաստվում են մեկնել արտերկիր	Բավարար բնակարանային պայման չունեն
25-29	54%	66%	63%
30-34	28%	23%	34%
35-39	18%	11%	3%

108. Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները մեկ անգամ ևս թույլ են տալիս փաստելու, որ 3-րդ երեխան, որպես կանոն, կանայք ունենում են կամ պլանավորում են ունենալ 30 տարեկանից հետո, և բավարար բնակարանային պայմաններ չունենալու հանգամանքը կարող է խոչընդոտել այդ մտադրության

իրականացմանը, ինչը նշանակում է, որ, մասնավորապես՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» նպատակային ծրագրի տարիքային սահմանափակումը պետք է հանվի կամ գոնե բարձրացվի մինչև 40 տարեկանը: 35-39 տարեկանների պարագայում, հերթական՝ 3-րդ երեխան ունենալու համար բավարար բնակարանային պայմանը որպես խոչընդոտը լինելու փոքր տոկոսը կարող է նշանակել, որ թեև իրենք ունեն բնակարան, բայց կուզենային նաև երեխաներին ապահովել բնակարանով, ինչը, առանց լրացուցիչ աջակցության, սեփական միջոցներով անելը կամ շատ դժվար է, կամ գրեթե անհնարին է:

109. Շատ կարևոր է նաև աշխատանքային ապահովվածության խնդիրը՝ կինը վստահ չէ, որ կարող է հիպոտեքային վարկը փակել, որ աշխատանքը չի կորցնի կամ դրանից չի գրկվի:
110. Ինչպես վրեժը նշվել է միջազգային փորձի վերլուծության բաժնում՝ «Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ավելացումը միայն այն դեպքում է զուգորդվում ծնելիության մակարդակի բարձրացման հետ, երբ տնտեսական աճը կապված է աշխատուժի մեջ կանանց ներգրավման հետ: Կանանց զբաղվածության և նրանց ծննդաբերելու գործառույթի համատեղման հնարավորությունների ընդլայնումը՝ ծնելիության մակարդակի բարձրացման առանցքային գործոնն է»:
111. ՀՀ-ում համատեղման հնարավորությունների հետ կապված կան մի շարք խնդիրներ, որոնք ուշադրության կարիք ունեն և լուծում են պահանջում:
112. Այսպես, համաձայն 2015թ. Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից անցկացված «Աշխատանքի շուկայում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիության ապահովման հետ կապված իրավիճակի ուսումնասիրում» հետազոտության տվյալների, մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց.
 - գրեթե 83%-ը նշել են, որ չաշխատելու պատճառը՝ երեխայի խնամքով զբաղվելն է.
 - 24% նշել են, որ չեն կարողանում աշխատանք գտնել, հավանաբար՝ նույն պատճառով (երեխա են խնամում).
 - 7% նշել են, որ ամուսինը դեմ է, որ կինն աշխատի՝ «Տղամարդիկ նախընտրում են կանանց տեսնել ընտանիքում՝ երեխաների հետ զբաղվելիս».
 - ևս 6%-ը պարզապես չեն ցանկանում աշխատել (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. 0-3 տարեկան երեխա խնամողների չաշխատելու պատճառները

Դեռ սովորում եմ	1%
Չեմ ցանկանում աշխատել	6%
Աշխատանք չեմ կարողանում գտնել	24%
Խնամում եմ երեխայիս	83%
Ամուսինս դեմ է, որ ես աշխատեմ	7%

113. Երբևէ փորձել են աշխատանք գտնել 0-3 տարեկան երեխա խնամողների 69%-ը, սակայն գործատուները մերժել են, պատճառաբանելով.
 - ոչ բավարար գիտելիքները (հիմնականում՝ օտար լեզուների չիմացությունը), աշխատանքային փորձի պակասը, դիպլոմի բացակայությունը՝ **56%**.
 - աշխատանքային գրաֆիկը, ամուսնացած լինելու հանգամանքը՝ **16%**.
 - գործատուն չի մեկնաբանել՝ **15%**.
 - թափուր աշխատատեղերի բացակայությունը՝ **13%**:

114. Սակայն, երբ մինչև 3 տարեկան երեխա խնամող կանայք իրենք են գնահատում, թե ինչու չեն կարողացել աշխատանք գտնել, ապա ստացվում է միանգամայն այլ, գրեթե հակառակ պատկեր: Կանանց կարծիքով, առաջնայինը երեխա խնամելու հանգամանքն է, և դրանից բխող նաև գործատուի կողմից ներկայացվող

պահանջները՝ աշխատանքային պայմանների և կնոջ ընտանեկան կարգավիճակի անհամատեղելիության հետ կապված (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Ինչն է դժվարացնում 0-3 տարեկան երեխա խնամող կանանց աշխատանքի ընդունվելը

Երեխա եմ խնամում	36%
Աշխատանքային պայմանները, գործատուի կողմից ներկայացվող պահանջները (ընտանեկան կարգավիճակ, տարիք, սեռ և այլն)	35%
Թափուր աշխատատեղերի բացակայությունը	26%
Կրթության բացակայությունը	14%
Աշխատանքային փորձի կամ որակավորման բացակայությունը կամ ոչ բավարար լինելը	3,3%
Աշխատավարձի չափը	2,2%

115. Նախկինում աշխատել են 0-3 տարեկան երեխա խնամող կանանց 56%-ը: Աշխատանքից դուրս գալու պատճառ են հանդիսացել.


- ընտանեկան հանգամանքները՝ ամուսնություն, ֆիզարձակուրդ, երեխայի խնամք (35%).
- ցածր աշխատավարձը (35%), ինչը լուրջ ապախթանիչ է հանդիսանում կնոջ համար՝ աշխատելու և երեխայի խնամքը համատեղելու գործում.
- աշխատանքային գրաֆիկը (արտաժամյա աշխատանքը) (17%)
- կոնֆլիկտը ղեկավարի հետ (3,4%)
- հաստիքների կրճատումը (3,4%)
- հիմնարկի լուծարումը (3,4%):

116. Քանի որ աշխատանքից դուրս գալու հիմնական պատճառներից մեկը՝ արտաժամյա աշխատանքն է, ապա ներկայում մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց 79%-ը փնտրում են «ոչ լրիվ աշխատանքային օր» գրաֆիկով աշխատանք, որպեսզի կարողանան համատեղել երեխայի խնամքն ու աշխատանքը:

117. Ինչ վերաբերում է **աշխատող** և մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց, ապա նրանց.

- 40%-ն աշխատում են պետական.
- ևս 40%-ը՝ մասնավոր.
- 19%-ը ՀԿ հատվածում
- 1%-ն էլ միջազգային կազմակերպություններում (տե՛ս Պատկեր 19):

Պատկեր 19. 0-3 տարեկան երեխա ունեցողները տնտեսության որ հատվածում են աշխատում



118. 0-3 տարեկան երեխա խնամող կանանց.

- 78%-ն ունի մշտական աշխատանք,
- 15%-ի աշխատանքը ժամանակավոր բնույթ է կրում,
- 7%-ն էլ կատարում է պատահական աշխատանք:

119. Վարձու աշխատող են 0-3 տարեկան երեխա խնամող կանանց 72%-ը, գործատու են՝ 7%-ը և **հնքնագրաված են՝ 21%-ը:**

120. Մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց գրեթե ամեն 4-րդը (մոտ 22%-ը) նշել է, որ չգրանցված աշխատող է, այսինքն՝ աշխատանքի շուկայում խոցելի է ու չպաշտպանված:

121. 0-3 տարեկան երեխա խնամող կանանց 46%-ը մի քանի անգամ փոխել է աշխատատեղը:

Աղյուսակ 7. 0-3 տարեկան երեխա խնամող կանանց աշխատատեղը փոխելու պատճառները


Ավելի լավ աշխատանքի անցնելը՝ պաշտոնեական առաջխաղացում, ավելի բարձր աշխատավարձ	30%
Ավելի հարմար աշխատանքային գրաֆիկը	19%
Ընտանեկան հանգամանքները՝ ամուսնություն, երեխայի խնամք	16%
Հաստիքների կրճատումը	16%
Ոչ մշտական աշխատանք էր	14%
Հիմնարկի լուծարումը	8%

122. Ինչ վերաբերում աշխատանքային օրվա տևողությանը, ապա.


- լրիվ աշխատանքային օրով, ամբողջ աշխատանքային շաբաթ աշխատում է **64%-ը.**
- չկանոնակարգված կամ ազատ գրաֆիկով՝ **22%-ը.**
- ոչ լրիվ աշխատանքային օրով, ամբողջ աշխատանքային շաբաթ՝ **6%-ը.**
- ավելին քան լրիվ աշխատանքային օրով (արտաժամյա), ամբողջ աշխատանքային շաբաթ՝ **4%**
- ավելին քան լրիվ աշխատանքային օրով (արտաժամյա), ոչ ամբողջ աշխատանքային շաբաթ՝ **4%:**

123. Որպես այս ամենի արդյունք, ի հայտ է գալիս կանանց ցածր վարձատրության խնդիրը (տե՛ս Պատկերներ 20 և 21):

Պատկեր 20. 0-3 տարեկան երեխա խնամող կանանց աշխատավարձի չափը



Պատկեր 21. Կանանց աշխատավարձի բաշխվածությունն ըստ տնտեսության հատվածների



124. Խորացված հարցազրույցներից

«Ընտանիքը կնոջ կարիերայի (մասնագիտական) համար խոչընդոտ է հանդիսանում: Ընդհանուր առումով, ընտանիքներ կան... դե **եթե երեխաները փոքր են, մարդիկ հնարավորություն չունեն դայակ վարձելու իրեն երեխաներին խնամելու համար՝ խոչընդոտներ կարող են առաջանալ...**»:

«Կանանց կարիերայի համար հիմնական խոչընդոտը՝ **երեխաների խնամքն ա**, ընտանիքի նկատմամբ ունեցած իրանց պարտականությունները: Մինչև որ այս բոլորի միջով կինը անցնում ա, հասնում ա մի այնպիսի տարիքի, որ ասում են՝ «35 տարեկանից բարձր ես, մինչև 35 տարեկան», այ տենց են ասում: **Բայց մինչև 35 տարեկանը՝ կինը զբաղված ա իր ընտանիքի խնդիրներով**»:

«... որովհետև շատ կանայք այսօր ունեն հնարավորություն աշխատելու, բայց տան տղամարդը չի թողում **կամ երեխայի խնդիրն ա...** մենակ էդ, թե չէ օրինական դաշտում տենց խնդիրներ չկան, իրականում էդ պատճառը»:

«Համաձայն եմ, որ տղամարդկանց ավելի հաճախ են նշանակում որոշակի պաշտոններում, հաշվի առնելով այն, որ **25-30 տարեկանը կանանց վերարտադրողական շրջանն ա, և նրանք դուրս են մնում**»:

աշխատաշուկայից: Երևի պատճառը այն է, որ տղամարդկանց հետ ավելի հեշտ է աշխատելը՝ նրանք ավելի հեշտ են ընտանիքից կտրվում, քան կանայք»:

«...Ընտանիքը, երեխաները հիմնականում, իհարկե, խանգարում են: Նույն ձևով հնարավոր չէ և ընտանիքով, և դրսի աշխատանքներով զբաղվել: Խոչընդոտը առաջին հերթին հենց կին լինելն ա»:

«Երբ աղջիկների են աշխատանքի ընդունում, հարցնում են՝ «հո չե՞ս պատրաստվում ամուսնանալ: Իսկ երեխա՞ ունենալ», մտածում են՝ **կամուսնանա, երեխա կունենա, ֆիզարձակուրդ կգնա և դա կխոչընդոտի իրենց գործին**, դրա համար տղաներին ավելի շատ են տեղ տալիս»:

«Ինձ մոտ շատ են գալիս երիտասարդ աղջիկներ, ու միշտ հարցնում եմ՝ սովորել ես, ինչ մասնագիտություն ունես, աշխատում ես, թե չէ: Շատերը ասում են՝ դե ինչ, **ամուսնացել եմ, չեմ աշխատում, կամ երեխա եմ ունեցել**, կամ ամուսինս չի թողնում, կամ դե տանը համաձայն չեն: Բայց չէ որ նա կրթություն է ստացել, չէ որ մեր ազգը կարող է լավ ղեկավարի կորցնի, լավ մասնագետի կորցնի»:

125. Եզրակացություններ

- 3-րդ երեխան ունենում են մեծամասամբ 30-39 տարեկան կանայք: Նշանակում է, որ երկրում ընդլայնված վերարտադրություն ապահովում է հենց այս տարիքային խումբը: Եվ այս հանգամանքը հարկավոր է հաշվի առնել՝ ժողովրդագրական քաղաքականություններ մշակելիս:
- Քանի որ 3-րդ երեխան, որպես կանոն, կանայք ունենում են կամ պլանավորում են ունենալ 30 տարեկանից հետո, բավարար բնակարանային պայմաններ չունենալու հանգամանքը կարող է խոչընդոտ հանդիսանալ այդ մտադրության իրականացման ճանապարհին:
- Մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց գերակշռող մեծամասնության չափատեսլու պատճառը՝ երեխայի խնամքով զբաղվելն է:
- Մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց 3/4 փնտրում են «ոչ լրիվ աշխատանքային օր» գրաֆիկով աշխատանք, որպեսզի կարողանան համատեղել երեխայի խնամքն ու աշխատանքը:
- 0-3 տարեկան երեխա խնամող կանանց 1/3-ի համար աշխատանքից դուրս գալու պատճառ են հանդիսացել ընտանեկան հանգամանքները (ամուսնություն, ֆիզարձակուրդ, երեխայի խնամք), ինչպես նաև աշխատանքի ցածր վարձատրությունը:
- Ցածր աշխատավարձը լուրջ ապախթանիչ է կնոջ համար՝ աշխատելու և երեխայի խնամքը համատեղելու գործում:
- Մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց գրեթե ամեն 4-րդը չգրանցված աշխատող է, այսինքն՝ աշխատանքի շուկայում խոցելի է ու չպաշտպանված:
- Աշխատանքային ապահովվածության խնդիրը շատ կարևոր է՝ կինը վստահ չէ, որ կկարողանա հիպոտեքային վարկ փակել, որովհետև կարող է աշխատանքը կորցնել կամ դրանից զրկվել, ինչպես նաև՝ աշխատավարձի ցածր լինելու պատճառով:

IV. Հիմնական եզրակացություններ և առաջարկություններ.

126. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 7-րդ՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը» գլխի 27-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում հարկավոր է կատարել փոփոխություն և լրացում՝ այն վերածնակերպելով հետևյալ կերպ. «3. Սույն օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածների դրույթները տարածվում են նաև ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների վրա, ինչպես նաև չաշխատող անձանց վրա»:
127. Փոփոխությունը հնարավորություն կնձեռի ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամ կանանց համատեղել աշխատանքն ու երեխայի խնամքը, ինչպես նաև խրախուսել նրանց հերթական երեխա ունենալը):
128. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 7-րդ՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը» գլխի 28-րդ հոդվածի 14-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել:
129. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 7-րդ՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը» գլխի 28-րդ հոդվածի 11-րդ կետում կատարել համապատասխան փոփոխություններ:
130. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 7-րդ՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը» գլխի 28-րդ հոդվածի 9-րդ կետում ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Մինչև երեք տարեկան երեխա խնամող չաշխատող անձի՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալու ժամանակահատվածում աշխատանքի ընդունվելուց և առնվազն 6 ամիս հետո աշխատանքից ազատվելուց՝ 15 օրվա ընթացքում, գործադրուն այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է համապատասխան տարածքային կենտրոն»:
131. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 7-րդ՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը» գլխում ավելացնել 28.1. հոդված, հետևյալ բովանդակությամբ.
- «Հոդված 28.1. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակելը և վճարելը
- Չաշխատող անձին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը նշանակվում է դրա իրավունքն ունեցող անձի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:
- Չաշխատող անձին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը նշանակելու դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, չաշխատող անձին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
- Չաշխատող անձին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը հաշվարկել նվազագույն աշխատավարձի 30 տոկոսի չափով, աշխատող անձին՝ նվազագույն աշխատավարձի 60 տոկոսի չափով: Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալու ժամանակահատվածում աշխատքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքի նպաստի չափը հաշվարկել նվազագույն աշխատավարձի չափով»:

132. 28-րդ հոդվածի փոփոխությունը և նոր՝ 28.1 հոդվածի ավելացումը կունենա մուլտիպլիկատիվ ազդեցություն՝ երեխա խնամող աշխատող, երեխա խնամող չաշխատող և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կանանց վրա, մասնավորապես.

- աշխատող կանանց հնարավորություն կնձեռի համատեղել աշխատանքն ու երեխայի պատշաճ խնամքը,
- չաշխատող կանանց կխրախուսի ներգրավվել աշխատաշուկա:

133. Աշխատող մայրերի նպաստի չափի ավելուցը կարելի է իրականացնել «հարկերի վերադարձման» ճանապարհով՝ համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու միջոցով:

134. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ՝ «Աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները» հոդվածի 2-րդ՝ «Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում

հաշվառվում են նաև՝» կետի «3) ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի» ենթակետը պետք է վերանայվի՝ խտրական դրույթները վերացնելու համար, այսինքն՝ հանվի «վեց տարուց ոչ ավելի» սահմանափակումը:

135. Քանի որ այդ սահմանափակումը, մի կողմից՝ թույլ չի տալիս ստաժի մեջ հաշվարկել 4-րդ, 5-րդ և ավելի երեխաների խնամելու ժամանակահատվածը, մյուս կողմից՝ չի խրախուսում աշխատող կանանց 4 և ավելի երեխաներ ունենալը:
136. ՀՀ **քաղաքացիական օրենսգրքի** 21-րդ՝ «Քաղաքացիների իրավունակության բովանդակությունը» հոդվածի դրույթը վերաձևակերպել հետևյալ կերպ՝
- «Քաղաքացիները, **անկախ սեռից**, կարող են՝
- 1) սեփականության իրավունքով ունենալ գույք.
 - 2) ժառանգել և կտակել գույքը.
 - 3) զբաղվել ձեռնարկատիրական և օրենքով չարգելված ցանկացած այլ գործունեությամբ.
 - 4) ինքնուրույն կամ այլ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ համատեղ ստեղծել իրավաբանական անձ.
 - 5) կնքել օրենքին չհակասող գործարքներ և կրել պարտավորություններ.
 - 6) ընտրել բնակության վայր.
 - 7) ունենալ գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների, գյուտերի ու մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքների հեղինակի իրավունքներ.
 - 8) ունենալ այլ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ»:
137. «**Երիտասարդ ընտանիքներին՝ մատչելի բնակարան» ծրագրի** մեջ ավելացնել մի դրույթ, որը կնախատեսի երրորդ երեխայի ծնվելու դեպքում տոկոսադրույքի նվազեցում, իսկ 3-րդ աղջկա ծնվելու դեպքում՝ տոկոսադրույքի էլ ավելի մեծ նվազեցում:
138. «**Երիտասարդ ընտանիքներին՝ մատչելի բնակարան» ծրագրում** հանել տարիքային սահմանափակումը կամ վերին շեմը սահմանել 40 տարեկան, որոնհետև 3-րդ երեխան հիմնականում ցանկանում են ունենալ կամ ունենում են 30-39 տարեկան կանայք: 35-39 տարեկանների համար ի հայտ է գալիս նաև երեխաներին բնակարանով ապահովելու խնդիրը, հատկապես՝ 3-րդ երեխան ունենալու համար դա որոշիչ կարող է լինել: Առաջարկվում է ծրագրում վերանայել նաև կանխավճարի վերաբերյալ դրույթը:
139. ՀՀ արդարադատության նախարարի 2007թ. մայիսի 14-ի N 97-Ն «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» հրամանի Հավելված 3-ի 2-րդ՝ «Դիմումն ընդունելիս ՔԿԱԳ մարմնի ղեկավարն ամուսնացողներին ծանոթացնում է ամուսնության գրանցման պայմաններին ու կարգին, նրանց պարզաբանում է իրենց իրավունքներն ու պարտականությունները՝ որպես ապագա ամուսիններ և ծնողներ:» կետի մեջ ավելացնել նոր նախադասություն. «Ինչպես նաև տրամադրվում է տեղեկատվական նյութեր մարդու վերարտադրողական իրավունքների, սեռի հատկանիշով բռնության (այդ թվում ընտանեկան բռնության, սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության) վերաբերյալ»:
140. ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության միջոցառումների ծրագրի» 15-րդ կետի՝ *Երիտասարդների գենդերային հավասարության խնդիրների վերաբերյալ միջոցառումների իրականացման* ժամանակ նախատեսել/ընդգրկել նաև «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ու դրա հետևանքների մասին» թեմաների լուսաբանումը: Նույնը նաև 33-րդ կետի՝ Վերարտադրողական առողջության վերաբերյալ միջոցառումների իրականացման ժամանակ:
141. ՀՀ կառավարության 2015թ. արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման միջաջառումների ծրագրի» 8-րդ կետի՝ *Մարզաբնակ երիտասարդների համար*

...վերարտադրողական առողջության վերաբերյալ միջոցառումների իրականացման ընթացքում նախատեսել/ներառել նաև «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ու դրա հետևանքների մասին» թեմաների լուսաբանումը:

142. Հերթական երեխային ունենալու և աշխատանքը չկորցնելու համար որոշիչ է մանկապարտեզների և երկարօրյաների, կամ երեխաների (այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող) խնամքի այլ ծառայությունների հարցի լուծումը: Շատ կարևոր է նաև **«երեխայի խնամք – ճկուն աշխատաժամանակ - ճկուն գրաֆիկով աշխատող երեխայի խնամքի կազմակերպություններ»** խնդրի լուծումը:
143. Աշխատելու և երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնումը նպաստում է նաև կնոջ դերի բարձրացմանը, քանզի տղա ունենալու ցանկությունը կապվում է այն հանգամանքի հետ, որ **նա պետք է աշխատի** և ծնողներին պահի՝ նրանց ծերության օրոք: Իսկ կինը **«չի աշխատելու»**:
144. Առաջարկվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 26 ապրիլի 2011 թվականի N 31-Ա/1 **«ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի մարտի 30-ի N 28-Ա/1 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»** հրամանի 1-ին կետի 3-րդ կետով սահմանել լրացուցիչ չափանիշներ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Փաստաթուղթը մշակվել է Քաղաքականության վերլուծության խորհրդատվական խմբի պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության փորձագետների (Policy Analysis and Policy Advice Group (PAPAG), Gender-Biased Sex Selection Prevention Policy Experts (GIUSSEPPE)) կողմից՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության (ՄՁՄԿ) «Սթեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության («Սեյվ դը Չիլդրեն Նիդերլանդներ»), «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի (ԱՁԿ), «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի (ՄԿՀԽ) և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպության (ՄԴՉ) հետ համագործակցությամբ և Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը մեծապես շնորհակալ է բոլոր նրանց, ովքեր աջակցել են մեզ «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի իրականացման ընթացքում: Մենք շնորհակալ ենք մեր աշխատանքի ընթացքում ձեր արտահայտած ոգեշնչող գաղափարների, անգնահատելի կառուցողական քննադատության և բարեկամական խորհուրդների համար: Մեր ջերմ երախտագիտությունն ենք ուղղում մեր բոլոր գործընկերներին՝ ծրագրին վերաբերվող տարբեր հարցերի կապակցությամբ հնչեցված պայծառ ու խորիմաստ մտքերի համար:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր խորին երախտագիտությունն է հայտնում Եվրոպական հանձնաժողովին, որի օժանդակությամբ հնարավոր դարձավ սույն վերլուծությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Միավորված ազգերի բնակչության հիմնադրամին, որի ջանքերը մշտապես որոշիչ են եղել Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարում պետական և հասարակական կառույցների և զարգացման միջազգային գործընկերների ջանքերն համատեղելու և պետական քաղաքականության ուղիները հարթելու գործում:

Ձեզ ներկայացվող քաղաքականության վերլուծության աշխատանքներն անհնար կլինեին առանց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության շահագրգիռ աջակցության: Նախարարությունները մշտապես արձագանքել են տեղեկությունների հավաքման աշխատանքներին, և առանց դրանց գործուն աջակցության հնարավոր չէր լինի ընթացիկ զարգացումների վերաբերյալ հուսալի տեղեկություններ, ինչպես նաև մի շարք փորձագետների մասնակցությունն ապահովել հետազոտության ընթացքում: Մենք ցանկանում ենք նաև հատուկ երախտագիտության խոսք ուղղել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ՀՀ Հանրային խորհրդի, ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության, ՀՀ ԱՆ Պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական կենտրոնի, ՀՀ ՏԿԱԻՆ փրկարար ծառայության աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոնի մեր գործընկերներին՝ «Պտղի սեռի խտրական ընտրության պատճառների կանխման պետական քաղաքականության նախաձեռնություններ» խորագրով քաղաքականության քննարկումների ընթացքում հնչեցրած փայլուն դիտողությունների և առաջարկների համար:

Շնորհակալության խոսք ենք ուղղում նաև Արմավիրի զարգացման կենտրոնին, Մարտունու կանանց համայնքային խորհրդին և Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպությանը՝ սերտ համագործակցության համար:

Պատիվ ենք համարում նաև մեր խորին երախտագիտության խոսքն ուղղել ՀՀ Ազգային Ժողովի առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի անդամներին և փորձագետներին՝ շահագրգիռ քննարկումների և արժեքավոր մտքերի համար, որոնք մեծապես օգտակար են եղել սույն հետազոտության համար, թե՛ տեսական, թե՛ գործնական առումով: Ձեր խորհուրդներն ու կարծիքներն անգնահատելի են:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը շնորհակալություն է հայտնում նաև քաղաքականության քննարկումներում կարևոր ներդրում ունեցած մեր գործընկերներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությանը, ՀՌԿԿ-Հայաստանին, Համալսարանական

կրթությամբ կանանց ասոցիացիային, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնին, ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամին, Կանանց իրավունքների կենտրոնին, «Հուլիսի Կամուրջ» հասարակական կազմակերպությանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտին, ՀՀ ԱՍՀՆ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտին, ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս. Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտին:

V. Հավելվածներ

Հավելված 1. Տեղեկանք հղիության, ծննդաբերության և երեխաների խնամքի կապակցությամբ տրվող նպաստների ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ¹⁰

ՀՀ-ում Հղիության, ծննդաբերության և երեխաների խնամքի կապակցությամբ տրվող նպաստներն են.

- Մայրության նպաստը,
- Երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- Երեխայի խնամքի նպաստը:

Մայրության նպաստը տրվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար:

Աշխատող կնոջ մայրության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձից:

Չաշխատող կնոջ մայրության նպաստը (տրվելու է 2016 թվականի հունվարի 1-ից) հաշվարկվում է նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից:

2014 թվականին մայրության (հղիության և ծննդաբերության) նպաստի ծախսը կազմել է շուրջ 7 մլրդ. դրամ: ՀՀ 2016 թվականի ծախսը կանխատեսվում է շուրջ 6.3 մլրդ. դրամ: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 9.8 մլրդ. դրամ (պայմանավորված է 2016 թվականից չաշխատող մայրերին վճարելու հանգամանքով):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը տրվում է բոլորին՝ անկախ աշխատելու հանգամանքից:

Սկսած 2014 թվականի հունվարի 1-ից՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը կազմում է.

- 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 50000 դրամ,
- 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն. դրամ,
- 5-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն. դրամ:

Ընդ որում, 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում առձեռն վճարվում է 500 հազ. դրամը, իսկ մնացած գումարը (3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 500 հազ. դրամ, 5-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն. դրամ) փոխանցվում է երեխայի անվամբ բացված սոցիալական աջակցության հաշվին՝ որպես ընտանեկան դրամագլուխ:

Երեխայի խնամքի նպաստը տրվում է երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողը՝ մինչև երեխայի 2 տարին լրանալը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով երեխայի խնամքի նպաստի համար նախատեսվել է շուրջ 2.8 մլրդ. դրամ:

Միաժամանակ, 24.11.2015թ. ՀՀ ԱԺ-ն ընդունել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Ընդունված օրենքով՝

1. Վերանայվում են երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման կարգը՝ պարզեցնելով այն: Մասնավորապես.

- հանվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար ծնողի և նոր ծնված երեխայի՝ համատեղ նույն հաշվառման վայրում հաշվառված լինելու պահանջը,

¹⁰ Տեղեկանքը մշակվել է 2015թ. նոյեմբերի 30-ին ՄԶՄԿ կողմից կազմակերպված «Պողի սեռի խտրական ընտրության պատճառների կանխման պետական քաղաքականության նախաձեռնություններ» խորագրով կլոր սեղանի ընթացքում ներկայացված «Պետական նպաստների համակարգի՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված տարրերը և դրանց ֆինանսական գնահատականները» զեկուցման նյութերի հիման վրա: Սմբատ Սահյան, Սոցիալական ապահովության պետական ծառայություն, ՀՀ ԱԱՀԿ: 2015թ. Երևան:

- պարզեցվում է նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու կարգը՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի առնելով նոր ծնված երեխայի մորից սերված երեխաներին՝ անկախ համատեղ բնակվելու հանգամանքից,
- հանվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար անձամբ դիմելու պահանջը:

2. հստակեցվում և վերանայվում է երեխայի խնամքի նպաստը նշանակելու և վճարելու կարգը, մասնավորապես.

- հստակեցվում են խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու և վերականգնելու, խնամքի նպաստ վճարելը դադարեցնելու և վերսկսելու պայմաններն ու կարգը,
- հանվում են խնամքի նպաստ նշանակելու համար ծնողի և երեխայի՝ համատեղ նույն հաշվառման վայրում հաշվառված լինելու պահանջը՝ հնարավորին պարզեցնելով նպաստի նշանակման և վճարման ընթացակարգերը:
- վերացվում է գործատուի կողմից տրված տեղեկանք ներկայացնելու պահանջը (խնամքի արձակուրդում գտնվելը հաստատելու համար կիրառվելու է «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեղեկատվական բազայի տվյալները ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու վերաբերյալ),
- ներդրվում է խնամքի նպաստը լիազորագրով վճարելու ինստիտուտը,
- հստակեցվում են խնամքի նպաստը վճարելու եղանակները՝ կանխիկ և անկանխիկ և այլն:

ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի նիստում ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով.

- վերանայվում է դիմողից սերման փաստը հաստատող՝ օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթերի հյուպատոսական վավերացման կամ ապոստրիփ պահանջը այն երկրների համար, որտեղ կան օբյեկտիվ դժվարություններ (մասնավորապես՝ Իրաք, Սիրիա)
- ծնելիությունը խթանելու նպատակով՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվելու նաև նոր ծնված երեխայի ծնողներից (հորից և մորից) սերված՝ նոր ծնված երեխայի ծննդյան օրվան նախորդող որոշակի ժամանակահատվածում մահացած երեխաներին և զավակներին (հարազատ քույրերին ու եղբայրներին),
- հնարավորություն է տրվում երեխայի ծննդյան միանվագ նպաստն անկանխիկ եղանակով վճարելու շահառուի՝ տարածքային բաժին ներկայացված փաստաթղթեր (տեղեկատվության) հիման վրա բանկում նրա անվամբ անվճար բացված ավանդային հաշվին փոխանցելու միջոցով,
- ընդլայնվում են ընտանեկան դրամագլխի միջոցները օգտագործելու շրջանակը՝ սահմանելով, որ այն կարող է օգտագործվել նաև՝

ա. հաշվետիրոջ ծնողին կամ որդեգրողին գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման համաձայն և առկա է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ,

բ. ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույք (այսուհետ՝ Գույք) գնելու համար, եթե գնորդը հաշվետիրոջ ծնողն է կամ որդեգրողը (Գույք վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Հավելված 2. Հաշվարկ. Երեխայի խնամքի նպաստի համար անհրաժեշտ միջոցների¹¹

Առաջարկվող մոդելը.

- մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ խնամքի արձակուրդի իրավունք ունեցող, սակայն խնամքի արձակուրդում չգտնվող անձի խնամքի նպաստը վճարել նվազագույն ամսական աշխատավարձի չափով կամ 55,000 դրամ,
- մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ խնամքի արձակուրդում գտնվող անձի խնամքի նպաստը վճարել նվազագույն ամսական աշխատավարձի 60 տոկոսի չափով կամ 33,000 դրամ (55,000 դրամ X 60 %),
- մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ չաշխատող անձի խնամքի նպաստը վճարել նվազագույն ամսական աշխատավարձի 30%-ի չափով կամ 16,500 դրամ (55,000 դրամ X 30 %):

Յուրաքանչյուր տարի ՀՀ-ում ծնվում շուրջ 43,500 երեխա, որոնցից շուրջ 13,000-ի համար վճարվում է մայրության (հղիության և ծննդաբերության) նպաստ՝ որպես աշխատողներ:

Իսկ տարեկան խնամքի նպաստ է վճարվում շուրջ 13,500 անձի, որոնցից կեսին նպաստը վճարվում է մինչև 1 տարեկան երեխայի համար: Այսինքն, յուրաքանչյուր տարի մայրության (հղիության և ծննդաբերության) նպաստ ստացած 13,000-ից շուրջ 6,750-ը ձևակերպում են երեխայի խնամքի արձակուրդ (մնացած 6,250-ը շարունակում են աշխատել):

Վերը նշված ցուցանիշների փոխկապակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ տարվա ընթացքում նպաստ ստացողների թիվը կկազմի.

- մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ խնամքի արձակուրդի իրավունք ունեցող, սակայն խնամքի արձակուրդում չգտնվող անձինք (նպաստի առաջարկվող չափը՝ 55,000 դրամ)՝ 12,500 անձ (որոնցից կեսի երեխաները՝ մինչև մեկ տարեկան են, մյուս կեսինը՝ 1-2 տարեկան),
- մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ խնամքի արձակուրդում գտնվող անձինք նպաստի առաջարկվող չափը՝ 33,000 դրամ)՝ 13,500 անձ (որոնցից կեսի երեխաները՝ մինչև 1 տարեկան են, մյուս կեսինը՝ 1-2 տարեկան),
- մինչև 2 տարեկան երեխա խնամող՝ չաշխատող անձինք (նպաստի առաջարկվող չափը՝ 16,500 դրամ)՝ 61,000 անձ (որոնցից կեսի երեխաները՝ մինչև 1 տարեկան են, մյուս կեսինը՝ 1-2 տարեկան):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնամքի նպաստը վճարվում է հետծննդյան արձակուրդի ավարտից հետո՝ մինչև երեխայի 2 տարին լրանալը՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխայի համար նպաստը միջինը վճարվում է 22 ամիս կամ տվյալ տարվա ընթացքում միջինը շուրջ 11 ամիս:

Անհրաժեշտ միջոցների չափը կկազմի տարեկան շուրջ 21.2 մլրդ. դրամ, որից՝

- խնամքի արձակուրդի իրավունք ունեցող, սակայն խնամքի արձակուրդում չգտնվող 12,500 անձի համար՝ շուրջ 2.6 մլրդ. դրամ (13,500 անձ X 33,000 դրամ X 11 ամիս),
- խնամքի արձակուրդում գտնվող 13,500 անձի համար՝ շուրջ 7.6 մլրդ. դրամ (13,500 անձ X 33,000 դրամ X 11 ամիս),
- որպես չաշխատող՝ մայրության նպաստ ստացած 61,000 անձի համար՝ շուրջ 11 մլրդ. դրամ (60,000 անձ X 16,500 դրամ X 11 ամիս):

¹¹ Տեղեկանքը մշակվել է 2015թ. նոյեմբերի 30-ին ՄՁՄԿ կողմից կազմակերպված «Պտղի սեռի խտրական ընտրության պատճառների կանխման պետական քաղաքականության նախաձեռնություններ» խորագրով կլոր սեղանի ընթացքում ներկայացված «Պետական նպաստների համակարգի՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված տարրերը և դրանց ֆինանսական գնահատականները» զեկուցման նյութերի հիման վրա: Սմբատ Սահյան, Սոցիալական ապահովության պետական ծառայություն, ՀՀ ԱԱՀԿ: 2015թ. Երևան:

Հավելված 3. Տեղեկանք՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի վերաբերյալ¹²

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը պետական աջակցություն է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին:

Ում համար է նախատեսված ծրագիրը.

- ամուսիններից առնվազն մեկը ՀՀ 18-30 (ներառյալ) տարեկան քաղաքացի է
- ամուսինների տարիքային գումարը չի գերազանցում 60-ը,
- միաժամանակ ամուսիններից ոչ մեկի տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ), կամ
- երեխա ունեցող միայնակ ծնողին, որի տարիքը չի գերազանցում 30-ը (ներառյալ):

Համավարկառուներ են. Ձեր ամուսինը, Ձեր կամ Ձեր ամուսնու ծնողները, քույրը, եղբայրը, այլ անձինք՝ վարկատու կազմակերպության համաձայնությամբ

Որտե՞ղ և ի՞նչ

- Երևանում, ՀՀ մարզերում
- Մինչև 16,000,000 ՀՀ դրամի արժողության բազմահարկ շենքի բնակարան, տուն կամ կիսակառույց շինություն

Վարկերը տրամադրվում են առնվազն 10 տարի մարման ժամկետով:

Պետք է վճարել նաև կանխավճար՝ բնակարանի արժեքի առնվազն 30 տոկոսի չափով:

Վճարվում է հավասարաչափ վճարումներով կամ վարկի մայր գումարի հավասարաչափ մարմամբ:

Ինչպե՞ս է վարկատու կազմակերպությունը կայացնում վարկ տրամադրելու վերաբերյալ որոշումը.

- Ձեր վարկունակությունը.
- Ձեր և Ձեր ընտանիքի եկամուտները.
- Ձեր կուտակած միջոցները.
- Ձեր վարկային պատմությունը.
- Վարկի ապահովվածությունը:

Հնարավոր ի՞նչ ծախսեր կարող են առաջանալ հիփոթեքային վարկավորման գործընթացում.

- Անշարժ գույքի գնահատման հետ կապված ծախսեր.
- Ապահովագրության վճարներ.
- Հայտի ուսումնասիրության հետ կապված վճար.
- Վարկի սպասարկման վճար:

2015 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ վերաֆինանսավորվել է 1894 վարկ՝ 14,208.5 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով, որից.

- 901 վարկ 8,230.5 միլիարդ ՀՀ դրամ, պայմանագրային գումարով տրամադրվել է Երևանում.
- 993 վարկ 5,978 միլիարդ ՀՀ դրամ, պայմանագրային գումարով տրամադրվել է ՀՀ մարզերում:

¹² Տեղեկանքը մշակվել է 2015թ. նոյեմբերի 30-ին ՄՁՄԿ կողմից կազմակերպված «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառների վերացմանն ուղղված պետական քաղաքականության տարրերը» խորագրով կլոր սեղանի ընթացքում ներկայացված «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի ընթացքը, խնդիրներն ու մարտահրավերները, ձեռք բերված արդյունքներն ու քաղված դասերը՝ զեկուցման նյութերի հիման վրա: Թամարա Թորոսյան, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն: 2015թ. Երևան:

Հավելված 3. Տեղեկանք՝ ՀՀ-ում երիտասարդների և երիտասարդ ընտանիքների համար իրականացվող հիփոթեքային վարկավորման ծրագրի վերաբերյալ¹³

«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ ստեղծվել է 2009թ.: Հիմնադիրն է ՀՀ Կենտրոնական Բանկը:

Իրականացվող նպատակային ծրագրերի քանակը – 8

Վերաֆինանսավորված վարկերի.

- ընդհանուր գումար՝ շուրջ 23.6 մլրդ. ՀՀ դրամ
- քանակ՝ շուրջ 8300 վարկ, որից մոտ 2600-ը հիփոթեքային վարկեր

Ծրագրի անվանումը	Նպատակային խումբ
«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»	Երիտասարդ ընտանիքներ
«Մատչելի բնակարան՝ երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին»	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի երիտասարդ գիտնականներ և ստեղծագործական միությունների անդամներ
«Մատչելի բնակարան՝ երիտասարդ լրագրողներին, բժիշկներին, մանկավարժներին եւ սպորտսմեններին»	ՀՀ երիտասարդ լրագրողներ, մանկավարժներ, բժիշկներ և միջազգային մրցաշարերում հաղթանակած սպորտսմեններ
«Մատչելի բնակարան՝ երիտասարդ մասնագետներին»	ՀՀ երիտասարդ մասնագետներ
«Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագիր»	ՀՀ պետական ծառայողներ

Ծրագրի անվանումը	Նպատակային խումբ
«Մատչելի բնակարան՝ երիտասարդ մասնագետներին» 2 (նոր ծրագիր)	ՀՀ երիտասարդ մասնագետներ
Ուսանողական վարկերի վերաֆինանսավորման ծրագիր	ՀՀ ԲՈՒՀ-երի ուսանողներ
Կենցաղային տեխնիկայի վարկավորման վերաֆինանսավորման ծրագիր	ՀՀ ՊՆ, Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայողներ

¹³ Տեղեկանքը մշակվել է 2015թ. նոյեմբերի 30-ին ՄԶՄԿ կողմից կազմակերպված «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառների վերացմանն ուղղված պետական քաղաքականության տարրերը» խորագրով կլոր սեղանի ընթացքում ներկայացված «ՀՀ-ում իրականացվող երիտասարդներին ուղղված հիփոթեքային ծրագրեր» զեկուցման նյութերի հիման վրա: Հայկ Զաքարյան, «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ: 2015թ. Երևան:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիր

Շահառու	Երիտասարդ ընտանիքներ (ամուսինների գումարային տարիք 60 տարեկան)
Գումար	մինչև 11.2 միլիոն ՀՀ դրամ
Ժամկետ	Նվազագույնը 10 տարի
Տոկոսադրույք Սուբսիդավորում	Հաստատագրված տոկոսադրույք, ոչ ավել քան 10.5 % 2-ից 4 %
Կանխավճար	առնվազն 10% (ՀՀ մարզերի համար)
Գրավ	ձեռքբերվող անշարժ գույքը

«Մատչելի բնակարան՝ երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին»

Շահառու	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի երիտասարդ գիտնականներ և ստեղծագործական միությունների անդամներ
Գումար	մինչև 20 միլիոն ՀՀ դրամ
Ժամկետ	10-20 տարի
Տոկոսադրույք	Հաստատագրված տոկոսադրույք, տարեկան 9.5 %
Կանխավճար	առնվազն 20%
Գրավ	Ձեռքբերվող կառուցվող անշարժ գույքը

«Մատչելի բնակարան՝ երիտասարդ լրագրողներին, բժիշկներին, մանկավարժներին և սպորտսմեններին»

Շահառու	ՀՀ երիտասարդ լրագրողներ, մանկավարժներ, բժիշկներ և միջազգային մրցաշարերում հաղթանակած սպորտսմեններ
Գումար	մինչև 20 միլիոն ՀՀ դրամ
Ժամկետ	10-20 տարի
Տոկոսադրույք	Հաստատագրված տոկոսադրույք, տարեկան 9 %
Կանխավճար	առնվազն 20%
Գրավ	ձեռքբերվող կառուցվող անշարժ գույքը

«Մատչելի բնակարան՝ երիտասարդ մասնագետներին»

Շահառու	ՀՀ երիտասարդ մասնագետներ
Գումար	20 մլն. ՀՀ դրամ
Ժամկետ	10-20 տարի
Տոկոսադրույք	Հաստատագրված տոկոսադրույք, տարեկան 10 %
Կանխավճար	առնվազն 30%
Գրավ	ձեռքբերվող կառուցվող անշարժ գույքը

«Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագիր»

Շահառու	ՀՀ պետական ծառայողներ
Գումար	Ոչ ավել քան ձեռք բերվող բնակարանի արժեքի 92.5 %
Ժամկետ	մինչև 20 տարի
Տոկոսադրույք	Հաստատագրված տոկոսադրույք, տարեկան 10 %
Կանխավճար	Բնակարանի արժեքի առնվազն 7.5%
Գրավ	Ձեռքբերվող կառուցվող անշարժ գույքը

«Մատչելի բնակարան՝ երիտասարդ մասնագետներին» 2-րդ ծրագիր

Շահառու	ՀՀ երիտասարդ մասնագետներ
Գումար	25 մլն. ՀՀ դրամ
Ժամկետ	10-20 տարի
Տոկոսադրույք	հաստատագրված տոկոսադրույք, տարեկան 9 %
Կանխավճար	առնվազն 20%
Գրավ	ձեռքբերվող կառուցվող անշարժ գույքը